89199-82
Ե-76
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԵՐԱԽԱՅՐԻՔ

# ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ

Որպէս ոչ թէ խարդախութեամբ ինչ գիտէի զդպրութիւն, այլ մտի 'ի զօրութիւնս Տեառն. Տէր յիշեցի զարդարութիւնս քո միայն. Սաղմ. Հ. 15 և 16.



ԱՆԱԳԻԾՈՒԹ
A / 463

'Ի գործարանի Ուսումնարանի Հայոց ընծայելոյ յԱզնուական Գէորգայ Երեւման Արծրունւոյ.

1828 ՏՓԽԻՍ ՌՄՀԷ.

Գոհացող եկեղեցին և ցնծացեալն, որք առնել բերեն զօրս այս նուաստից.
Սաղմոս. ճժէ. 6.

Զուարթունք վերինք՝ հոյլք գեղանիք՝ խուռնաելով ՚ի յերկնից,
ձայն սփռալ՝ հոգենորոգ՝ առ մեզ հնչեն՝ հրճուալից.
դուք ըստորինքդ՝ ՚ի ըստորնոց՝ և մեք վերինքս՝ ՚ի վերնոց,
համաձայնեալ՝ Մարգարէին՝ վերամբարձցուք՝ զձայն երգոց.

Այս այն օր է՝ զոր արար Տէր՝ ՚ի խրախութիւն մեր սրտի,
ուրախ լիցուք՝ և ցնծասցուք՝ ՚ի ցնծութիւն բերկրալի.
զի ՚ի շրջել՝ երկոտասան՝ կենդանակերպ՝ կոչելոց,
եւ անսասան՝ մեզ վճարել՝ զընթացս աւուրց՝ անցելոց.

՚Ի վայրենի՝ այս կենցաղոյս՝ լեռնահանգոյն՝ կոհակաց,
զորս Ովկեան՝ ծով կատաղի՝ յարուցանել՝ մեզ կարաց.
պարածածկեալ՝ թևօք խնամոց՝ փրկէ ՚ի բիւր՝ փորձանաց,
և դարմանեալ՝ հասուցանէ՝ ՚ի նպատակ՝ բաղձանաց.

Ահա ճարտար՝ ամենիմաստ՝ և հմտագոյն՝ ղեկավար,
ընթաց կենացս՝ յանդորրութ հանգիստ՝ վարէ սիրով՝ մեղմաբար.
կամ քաջավարժ՝ բազմահնար՝ և աչալուրջ՝ կառավար,
զկենաց կառս՝ անդորր պահէ՝ սանձեալ զչարն՝ երիվար.

Արծիւ՛ սլացեալ՝ յարփւոյն շրջան՝ և խոյացեալ ՚ի յաղբիւր,
՚ի բաց վարեալ՝ զհնութիւնն՝ պճնի յընտիր՝ նոր փետուր.
այս օրինակ՝ բանականացս՝ մերկանալոյ՝ զխորխ մեղաց,
և սրբացեալ՝ հոգւով մարմնով՝ զնոքօք արկանել՝ զլոյս փառաց.

Այսօր երկինք՝ և երկիր նոր՝ ադամածնացս՝ երևի,
յորս Հօր փառաց՝ սուրբ ճառագայթ՝ խաւարելոցս՝ ջինջ ծագի.
զի ՚ի Յեսսեան՝ սուրբ արմատոյն՝ բղխեալն ՚ի մեզ՝ տեսանի,
եօթնեակ շնորհօք՝ Հոգւոյն սրբոյ՝ պերճապսակ՝ փառաւորի.

Յորում Հօր՝ իջեալ փառօք՝ պարուք զուարթնոց՝ յայս ժողով,
յաներևոյթս՝ հոգւոց մերոց՝ այս պատուէր՝ սուրբ սիրով.
ո՛վ դուք Հովուէ՛ք՝ և հօտ փոքրիկ՝ արեամբ Որդ՛ւ իմ՝ գնեալք,
զա՛յն աւետեաց՝ ձեզ պարգևեմ՝ ՚ի մուտ տարւոյս՝ խրախացեալք։

Ուս

Ուստի և մեք՝ մանկունք քո Հայր՝ լուեալ զձայն՝ փեսային,
սիրոյ ձայնիւ՛ առ ձեզ երգեմք՝ իբրև սոխակ՝ առ վարդին.
շնորհաւոր՝ ձեզ նոր տարի՝ մեծդ Ներսէս՝ նոր դարուս.
տուալ տէրունի՝ ՚ի մեզ յայտնեալ ՚և բարութեան՝ խրախոյս.

Դու պարտիզպան՝ սուրբ քաջաջան՝ ՚ի Տեառնէ մեզ՝ պարգևեալ,
շնորհօք նորին՝ ՚ի Հայկազանց՝ դու միայնակ՝ գերընտրեալ.
զարդացուցեր՝ զպարտէզ հոգւոցս՝ շնորհատեսիլ՝ նոր ծաղկօք,
զոր հոտոտեալ՝ հոգի քո սուրբ՝ հրճուի զմայլի՝ նուրբ հոտովք.

Մրվլի անզոյգ՝ ջահ պանծալի՝ ՚ի Հայկազինս՝ դու ծագեալ,
եռանդագին՝ շնորհօք Հոգւոյն, հուրբ վառ սիրոյն՝ բորբոքեալ.
որով փայլեալ՝ լուսաւորեն՝ բիրտ զաւակունք՝ Հայկազանց,
տարամերժեալ՝ զմէգ մթին՝ փայլին զերթ ջահ՝ լուսապանծ.

Տրիտուր քոյին՝ անթիւ բարեաց՝ չէ գործ ուրուք՝ վճարել,
թէ ոչ վերին՝ սուրբ Մկնարկչին՝ միայն և եթ՝ յանձն առնել.
զի Որ զերամս՝ որբոց եւրոց՝ արփիահրաշ զարդարեաց,
Նոյն և ՚ի ձեզ՝ հրաշացուսցէ՝ զեւր անճառ ձիրս՝ սր̄ փառաց.

Տարեգլուխ
1827 ամ.

Շարադրեալ յաշակերտէ հինգերորդ
Դասակարգի ՚ի Սեմինարէ Հայ-
ճարյուսեան Դասատարեանց.

Փող հարէք ՚ի գլուխ ամսոյ յաւուր նշանաւոր տօնախմբութեան մերոյ։ Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են Աստուծոյ Յակոբայ։ Սաղմ. Ձ. 3 և 4։

Շարժեսցեն մատունքս զաղխս քնարին ախորժ, անարգել,
Որ զայս տարեկան տօն հանդիսաւոր դրուատել, երգել,
Կաղանդ բարելի տարի շնորհալի իմ երգովս պատուել,
Ձեզ շնորհաւորել զայս օր նոր տարւոյ գովել և յարգել.

Քաղցրասցին ասէն ձայթմունք իմ լարից ՚ի ձայն ցնծութեան,
Երգեսցեն զայս տօն զանձկալի գուշակ փրկչին ծննդեան.
Բերկրեսցին այսօր բերկրանօք անճառ որդիք Ադամեան,
Զի եկեալ, հասեալ է օր զուարճալի և ամ փրկութեան։

Այսօր շնչաւոր, անշունչ արարածք ամենայն բնութեան,
Ընկեցին յանձանց պատմուճան մեղաց և քուրձ հնութեան.
Առին սփոփանօք զնորեամբք զհանդերձ կենաց նորոգման,
Եւ բերկրապատար օրհնեն և խմբեն զայս տօն տարեկան։

Հրաշալի է յոյժ այս տօն խրախանաց, կարի սքանչական,
Զոր պատմել բանիւ նիւթեղէն լեզուիս չեմ ես բաւական.
Քանզի պարակցեալ Սբ̄ք, Դասք Հրեշտակաց ը̄ որդիս մարդկ̄ն,
Քաղցրալուր երգով մեծարեն զհանդէս տօնախմբութեան։

Ահա ժողովեալ և մեք Ձեր որդիք այսօր միաբան,
Փութացաք տօնել խնդութեամբ որով զայս օր ցանկական.
Ընկալ աղաչեմք Հովի՛ւ հոգևոր հօտի բանական,
Զանձկութեանց մերոց, հոգւոց և սրտից սէր որդիական։

Դու Քաջ Հովուապետ ընտրեալ ՚ի վերուստ ազգիս Հայկազին,
Հովուեա զժողովուրդդ իբրև զՄովսէս Դէտ Իսրայէլեան.
Եւ ըստ անպարտ մեծ զօրավարին Յեսուայ Նաւեան,
Յաղթեալ թշնամեաց ած զմեզ յանքոյթ ՚ի յերկիր խոստման։

Կա՛ց մխիթարեա զազգ մեր տրտմագնեաց գթով հայրական,
Կա՛ց պայծառացն մեր զեկեղեցիս լուսով գիտութեան.
Տացէ Տէր երկնից Ձեր անդ̄ին կենաց կեալ ՚ի հանգստեան,
Մ՚րասեր ազգին յուղղոյ̄ն բարուց, բարւոք կեցութեան։

Իւր

Իբր ընդ աստեղաց ուրեք ցայգականին Լուսնոյն բոցավառ,
Թանձրամած և մութ, անլոյս գիշերոյ մերժէ զխաւար.
Նոյն և Ձեր ծագեալ յերկրի Հայաստան Արփի Հրաշափառ,
Սրբեցէք զմեզ 'ի մթաց մերոց աջովդ լուսամատար.

Մինչ մեծաբարբառ ձայնիւ հնչեսցեն հանդիսին փառաց,
Հանդերձեալ յետնոց համայնից ազանց զյաղթանակ բարեաց.
Նա մի ջնջեսցէ զանուամբ յիշատակ մեծիդ երախտեաց,
Թորգոմեան որդւոց 'ի խորոց սրտից ձեռք ժամանակաց.

Մերայցին կրկէսք, անկցին ամբարտակք, բրգունք բիւրամեան,
Ամենաշարժ կացցէ կանգնեալն 'ի մեր սիրտ Ձեր անեղծ արձան.
Այս նկարագիր անբաւ արդասեացդ մնասցէ անսասան,
Ընդդէմ դարուց չնաշխարհիկ գործոցդ զանուն բարութեան.

Յորչափ երկնահաս, ամպամերձ, խրոխտ՝ լերինք Կովկասեան,
Պանծան 'ի վերայ լայնածիր երկրի եբրու ախոյեան.
Յորչափ փայլեսցի լոյս Արեգական իշխանին տունջեան,
Փայլեսցի և Քոյդ ճառագայթ փառաց 'ի դար յաւիտեան.

Յորչափ շրջեսցի յարաշարժ շարժմամբ այս գունդ երկրական,
Յանկ որոտասցի Քոյդ մեծի բարեաց շաւինչ յապագայն,
Նա՝ երբ հնչեսցի այն ահեղագոչ փող Գաբրիէլեան.
Նախ Քոյդ լուիցեն մեռեալք է յառնել համբաւոյդ զձայն.

Տարեգլուխ 1827.
Յունուարի 1.
'Ի Տփխիս.

Յօրինեալ 'ի նուաստ Վարժապետէ Ներսիսեան Դպրոցի 'ի Ներսիսէ Աբարա-
թեանց.

Խորհրդոյ ուրախութեան պատարագին, և ըստ յաւե-
տենից ոճերէն · Ստեփ. հզ. 6.

Ուրախութեան՝ ձայնիւք հրճուեն՝ ազգ և ազինք՝ ամենայն,
ընորոդ մուտ՝ ՚ի Նոր տարիս՝ աւետեն մեզ՝ քաղցրաձայն.
Թէ մեք տարւով՝ տարին մեօք՝ հոլովեաց՝ զօր մարդկութեան,
խաղաղաւուրք՝ ողջին կենօք՝ աստիճանեաց՝ միւսանգամ.

Ահա են Քո փառք՝ մեծ երախտիք՝ աներևակ՝ Բարերար,
սիրես լուսամէս՝ գգուես, տածես՝ համապազորդ՝ հայրաբար.
ընուեց ՚ի Քէն՝ տընօրինի՝ կշիռ, սահման՝ չափ, կոպար,
Թէև ՚ի Քէն՝ մարդիկ հեռացեալ՝ ապերախտին՝ վայրապար.

Քանի՞ անբաւ են Քո բարիք՝ որք անձրևին՝ յազգ մարդկան,
դարս երջանիկ՝ փառաւորդեալ՝ յաւիտեան առ՝ յաւիտեան.
փառք Քեզ Արքայ՝ և գոհութիւն՝ մատուցանեմք՝ միաբան,
զի Դու բարի՝ միշտ և հաճիս՝ բարերարել՝ անխափան.

Ո՞չ նորանոր՝ փոփոխութիւնք՝ յոյժ զանազանք՝ յայս ամի,
հետ զհետէ՝ յաջորդեցան՝ յոտարութեան՝ մեր վայրի.
ո՞վ է հաստիչ՝ և այսց շարժիչ՝ շարունակեալ՝ մի առ մի,
Թէ ո՛չ Աջ Քոյ՝ անստերիւր՝ գործէ որպէս՝ և կամի.

Քանս է մեզ ժամ՝ յիշատակի՝ և խոկալոյ՝ զանցելոց,
որ, ընդ այսոտ՝ աշխոյժ հոգւով՝ ժուժել, տոկալ՝ եկելոց.
ուստի պարտիմք՝ շահատակել՝ զկնի, կազել՝ բուռն հողմոց,
անկործ, անդայթ՝ պարապելով՝ զամեօց հոգւոց՝ և մարմնոց.

Արդ Տէր իմ՝ առ զհամօրէն՝ Ուխտս մանկանց՝ տաճարի,
զնորդ յարմար՝ հաճ և մարմաջ՝ Թո՛ւեսցի Զերում՝ հանճարի.
կառել, կանգնել՝ կառուցանել՝ առ ոտորոտով՝ Սենայի,
ընդելանալ՝ հուժկու ձայնմանց՝ և ամպրոպաց՝ որ լսի.

Հըզօր համբաւ՝ հապճեպ իջցէ՝ առ Արամեանն՝ մեծ Ազգ,
տալ աւետիս՝ Թէ ստեղնի՝ ՚ի քէն բուսեալըն նոր հասկ.
ումսամանել՝ ոչ զօրեսցեն՝ աշխարհական փուշք տատասկ,
այլ Թէ լցցին՝ եԹերացօղ՝ գինեաւ շնորհաց՝ մեր կարասք.

Եւ

Ելցէ, ելցէ՝ հին ծերունին՝ (1) քաջաքարոզ՝ այն դարու,
չասել չկրկնել՝ թէ բնակեցայ՝ ես 'ի վրանս՝ Կեդարու.
ահա՛ հեղձաւ՝ գարշ աղխտութիւնն՝ ջնջող զողջոյն՝ մեր դարու,
և մեք զերծաք՝ 'ի շնորհաձիր՝ երկիր կաթին և մեղու։

Պանծալի է՝ կենդանագրել՝ զայս ժամանակ՝ ոսկեղէն,
յոր բանեղէնք՝ ողորմութ՝ Տեառն բարձրելոյ՝ լիք եղեն.
աստ տեսանեն՝ հարք զաւակունս՝ զի սրտադիւր՝ յայն դիմեն,
որք յետ ամաց՝ ինչ հայրենեաց՝ զանուն փառաց՝ պարգևեն։

Գոչեցէ, տեսցէ՝ Մայր մեր Սիոն՝ զաւուրս մեծի՝ վեհ վիճակ,
բանս ինչ խօսել՝ առ վայելողսն՝ յապայն մնալ՝ յիշատակ.
զի այսօր մեզ՝ են Տարեկանք՝ և Գլուխ ամսոց՝ բերկրունակ,
արժան է Սոն՝ խայտալ որդւովք՝ նորին բարեաց՝ լեալ դիտակ։

Դէմք և հոգի՝ երբ և արարք՝ ամենից են՝ շառագոյն,
ժպտիլ փայլեալ՝ 'ի նիշս աչաց՝ տայ մեզ նշան՝ գերագոյն.
թէ չէ օրս այս՝ յաւուրց սնոտի՝ որք հոսեցան ջուրց հանգոյն,
այլ է սկիզբն՝ նոր Յոբելեան՝ Քրիստոնէից երամոյն։

Ընդ միջնոյն՝ բանք իմ արդէն՝ վասն դորա՝ տարաժամ,
չեղեալ խոչ, խութ՝ կի՛ ձանձրութ՝ մաքուր լսելեաց՝ առ այս ժամ.
ընկալ, 'ի հաճոյս՝ ո՛վ Հայկերս՝ իմ փառաքի՝ յայս անգամ,
իմ յուսացայց՝ վերջնոյն մնալ՝ ապա թէև՝ միւսանգամ։

Մատուցանի՝ երախայրիս՝ 'ի յանդամոց գեր Գրչոյն,
երկրպագեալ՝ խոնարհութեամբ՝ Ընտանիս՝ սուրբ Հոգւոյն.
'ի Թերսուսումն աշակերտէ՝ մայր Դպրոցիս՝ բարեմոյն,
մեծաւ յուսով՝ ժտեալ զօրհնել՝ 'ի մաքրագործ՝ սրբ աջոյն.

Տարեգլուխ
1827 ամի փրկչին.
'Ի Տփխիս.

Ծառայեալ յԱստուածալ դպրէ Աշակերտաց
յԱշխարհէ և 'ի նորաշէն Սրբոյն Ներսէ-
սեան Մայր Դպրոցի ժողովէն.

(1) [illegible] Սիոն, [illegible] Ղուկ. [illegible] 1.

Կարգաւորեալ 'ի նուագարան ելից ըմբռնմանց երգոյն. Եղանակ. Դ. 13.

## Տաղերգութիւն առ 1827 նոր տարին.

Այսօր այս օր ծագեալ՝ նոր տարի ձայնեալ՝ Քրիստոսեան հօտի,
գեղգեղէ զքաղցրաստ՝ յաշխարհ Հայաստան՝ 'ի մեր հայրենի.
ուր Հայկ դիւցազն՝ սիգաձեմ մտեալ՝ 'ի հանդէս մարտի,
եաւթն նետիւ՝ յերկիր սեւեալ՝ զՆեբրովթ վէթխարի.

Որովհետեւ Հայոց՝ 'ի Բէլ հրոսակէ՝ հրաշիւք զերծանի,
թագակիր մեհեաց՝ կազմի սկսեալ՝ աթոռ արժանի.
սոյնպէս և զաւակն՝ յայս մեր գար ոսկի՝ նախնեաց ունելի,
սիրտ նոր Նեբրովթայ՝ սուսերաւ Կայսեր՝ առ 'ի մահ կոչի.

Յարկ անեղ Էին՝ նոյնատիպն յաւերժ՝ մտաւորական երկնի,
Մաւրք Եկեղեցի՝ պանծայ գերափառ՝ Երկին 'ի յերկիր.
ուր հրեշտակակերպ՝ Պետ Հովուապետաց՝ գերաշուք բազմի.
պարք Աւրհնեալ նմին՝ ձայնակցեալ երգեն՝ երգ նոր Քրիստոսի.

Յորս Ներսէս Արհի՝ Տէր մեր տեսնելի՝ պերճալոյս փայլի,
հովիւ յաջորդութեան՝ տիպ նախնւոյն մեծին Ներսէսի.
նորին սերտ սիրով՝ զրկէ, ժողովէ՝ նոր յակատանի,
զարդարես երկանց՝ Հայրուն Քրիստոսի՝ մաքուր արգանդի.

Պար մեր և ամբ մեր՝ անուշա ձայնեն՝ ժամանակ ոսկի,
յորս ամպ միգապատ՝ ձախող վնասել՝ 'ի մէնջ փարատի.
ընտիր Արուեստի՝ իմաստից դաշտի՝ Բնե մեզ նոր ծաղի,
ուստի Տարեգլուխ՝ Դարագլուխ է մեզ՝ պէսպէս բարեօք լի.

Անկապուտ փառօք՝ հրճուեսցին զարդիս՝ մանկունք Հայկածին,
միակցեալ զհանդերձ՝ խաւար տգիտութեան Բնէ մեծարեսցին.
արձանք պատուական՝ յանարուեստ վեմ՝ 'ի սիրտս կանգնեսցին,
անուն և վաստակ՝ անձնադիր Հովուի՝ անջինջ դրոշմեսցին.

Հայազգին յանհուն՝ երախտիս Արհիդ՝ աղէնք ամենայն,
անմարկել 'ի Բոյդ՝ 'ի սիրտ մեր կանգնել՝ գերահռչակ արձան.
աղօտ ինչ ցուցի՝ լոյս ամբարտակին՝ դիւցազնն Փիլեան,
'ի տալ ջինջ Աւրհնութ՝ մեզ նոր արշալոյս՝ և զօր խնդութեան

Յա-

Ի

Յարիցեն սատարք՝ ընծայս հանդիսի՝ Մուսայք երկնային,
ձայնակցեալ երգոյս՝ նոր երջանկութեան՝ երգօք պատուեսցեն.
զայս Աղանդ բարի՝ դար մեզ շնորհատու՝ քաղցր ներբողեսցեն,
հօտք Է. քաջ Հովուին՝ պարառեալ բերկրեալ՝ նուագ զմայլեսցեն.

Արձանեսցեն աստէն՝ բանք հագներգականք՝ նիւթականս դրչի,
տեսեալ զՁեր գրուած՝ 'ի յաննիւթ դրչէ՝ 'ի տախտակ սրտի.
անեղծ վաստակոցդ՝ անտխեղծ ջգանցդ՝ արձանն 'ի մարմնի,
կացցէ անսասան՝ 'ի փառս Հայրենեաց՝ Հայասէր ազգի.

1828 ամ Յունուարի. 1.
Ի Տփխիս.

Շնորհապարտեալ յԱշակերտաց վերջերորդ
Դաստիարակ 'ի Ներսիսեան Յօհան-
նէսեան Ներսիսեանց.

## Տաղերգութիւն ամ 1827 ամին:

Օրհնութիւն տարւոյ իմոյ առ ենչ. և մի հաներ զիս ՚ի կէս աւուրց իմոց, զի յազգէ յազգ են ամք քո: Սաղմ. ՃԱ. 22:

Երջան առեալ՝ բանականաց՝ և անբանից,
Յոյժ նեբրօղին՝ զփշխամնաւորս՝ լեզուաւ բանից.
զի սա դուշակ՝ զյարութենէ՝ մարդկան բնաւից,
թէ յարիցուք՝ նորոգիցուք՝ կեանս յանմահից.
Նորբառ սփռալի՝ ՚ի շրթանց մարդկան,
լսելի լինի՝ յունկնս բանական.
զինչ իցէ այսօր՝ զի ամենեքեան,
հրճուելին, խրախճանան՝ ձեռլին, դան, գնան:

Մեծ հանդէս է՝ այսօր աւուրց՝ ճողջոյն ամսոց,
զի ցնծան տիւք՝ բերկրին գիշերք՝ ընդ իւր ժամուց.
Նոր նորոգին՝ վայրկեանք բոպէք՝ որք յարանցին,
՚ի մի եկեալ՝ զուարճ պատմեն՝ զմէնջ առանձին.
Թէ քանի յոլով հոլովին առանցք,
այնքան և յաւէտ՝ կեանք ձեր են ՚ի յանցք.
փութա դու սեն՝ ով մարդ երկրածին,
զի երկնից բարիք՝ առ քեզ վերածին:

Յեղեալ արիւ՝ զամպս մթինս՝ Հիւսիսային,
չխաւարել՝ զայս օր յարդոյ՝ մարդկան սեռին.
արա շնորհ՝ նախամեծար՝ աւուր քոյին,
չխափանել՝ զուրախութիւն՝ մերոյ սրտին.
Քանզի յարդ աւուրս՝ է յոյժ պանծալի,
խորին խորհրդեամբ՝ պարադլուխ բազմի.
աստանօր դպիրք՝ դարուց և ամաց,
շքեղ ըղդեստուք՝ երևին փայլած:

Ով Դու արծիւ՝ վերաթռեալ՝ ՚ի մեր գլուխ,
Հոգւոյն վտակաց՝ զմայլեալ արբմամբ՝ առատաբուղխ.
Նուաստախոհ՝ անձն իմ տրկար՝ կորագլուխ,
մատչի առ հիւ՝ գովել յայս օր՝ շնորհայն զուղխ:
Որ Սերգիլոս՝ խուն ինչ սխատրոնաւ,
զոր եղանակէր՝ իւրում պաշտօնաւ.

Եկ

Ելցէ աստանօր՝ բերկրուն նուագաւ,
հանդարտ նուագեսցէ՝ խրախուսութեամբ մեծաւ.

Գեղեցկախօս երամք թռչնոյ՝ նուագեսջիք ,
նոր յեղանակ՝ զանբան երգ ձեր՝ արդ յօդեսջիք.
Յոբելեան փողք՝ քաջաքարոզ՝ տարփողեսջիք,
գումարք պարուց՝ պարառութեամբ՝ կայթս հարջիք.
Զի երկիրս յերկնից՝ ոչ զանազանի,
բոլոր Արաստան՝ նոր փառօք պճնի.
միջօք և տարիք՝ գնին ծանրագնի,
որս 'ի համարի՝ է յոյժ թանգագնի.

Ունայն ձգնի՝ Դիոգինէս՝ 'ի գիւտ մարդկան,
քանզի այժմեան՝ ստուերն նաև՝ է պատուական.
Շնորհքն է մեզ՝ մանանայի՝ իջեալ փոխան.
և ծիրք մտաց՝ մանկանց գոլեալ՝ է ապաստան.
Թագ տիրապարգև՝ տանս Թորգոմեանց,
արշալոյս արփւոյն՝ ծագեալ իմ կենաց.
սա համարեսցի՝ պատարագ բարեաց,
ծօնեալ ձեզ նուէր՝ յիմ անքատ մտաց.

Հայեաց Հոգի՝ քեզ ապաստան՝ մանկանցս դասու,
տուր մեզ կապել՝ ընդ ներհակացն քով զինու.
գաւազանի Հայրապետիս՝ տուր զօրութիւն,
նոյն և զանուն՝ և զամենայն շքեղութիւն.

1 Յունուարի 1827.
Տէրէ.

Շարագրեալ յԱշակերտէ միջերորդ Պատա-տան 'ի Յօհաննէ Շխրմաղանեան Սարգսեանց.

Տէր Տէր 'ի ճարտարութեան շնորհաւորութեան տօնի, նորոգեալ սրբոյ Աթոռոյ ճանաչողութեան տօնի.

Օծեալ Ա.Մ.Տ. Քոռեան Գահի փառաց որդայնցն,
Հայրապետ բանին՝ Ճոխ Ճշմարիտ՝ ըստ Յուսոյ փորձեալ.
Գահի պայծառաց՝ Մէ Եկեղեցւոյ՝ Տէր լուսաւորեալ,
Տէ մեր հոգւոյ՝ փարոս լուսաւոր՝ Տէր յայտնեալ։

Եկեղ շրջանաց՝ երկնից կամարաց՝ այսօր դադարել,
Նոր հոգով առեալ՝ նոր դար մեզ ցուցեալ՝ նոր ամ սկսանի.
Կեանք Զեր Արքունի՝ աւուրք հնունի՝ վերանորոգի,
Տէր երկնապարգեւ՝ որպէս արծուոյ՝ Զերդ շուրջ փառի։

Հնդեկին ամաց՝ բարձրահամբեր վշտաց՝ աւուրք ձեր անցին,
Պտուղ Ճգնանաց՝ մարուր մաղթանաց՝ զԶեզ առ հասուցին,
Նու է անարատ՝ Հայրն այն յուսահատ՝ որ կայ ցուցանէն,
Նանց փեսայից՝ Մէ Հայրապետին՝ յոյժ սիրամարգին։

Միածին Որդւոյ՝ Մանկունք կաթողիկոսունք՝ Մէ Էջմիածնի.
Նոր լալով շրջեն՝ հեծեն հառաչեն՝ 'ի յօտար վայրի.
'Ի հնոց երկաթի՝ բարբարոս Պարսից՝ միշտ 'ի վտանգի,
Ազնուական փրկչի՝ նոր Խնամակալի՝ Որդւոյն Պօղոսի։

Սա Նիկողայոս՝ ԱՄՏուստ ընտրեալ՝ Կայսր համայն Ռուսաց,
Ունի տարածել՝ կարկառել անշուշտ՝ գթական փրկանաց.
Նա անկեալ գլորեալ՝ և ամայացեալ՝ Տունն Թորգոմեանց,
Եւ փայթ աղատել՝ զազգ մեր տառապեալ՝ 'ի ժանեաց չարաց։

Օրհնեցէք զորութիւն՝ մեծ մխիթարութիւն՝ Հայր մեր Արքայական,
Օրհնեսցին աւուրք՝ անձրեւք բարեբեր՝ սաստիկ ձմեռանն.
Իբրեւ զորդ ծաղկունք՝ զօրք Ռուսաց անզբուք որք առ ներկայ կան.
Եւ վանիչք գերիչք՝ զրոհին Թշնամեաց՝ Խոյանք փրկչական։

Դիծունք Եջանեմք՝ առ Տէր պաղատիմք՝ որդիքս Հայկազեան,
Զոմունդք Պարոցիս՝ նոր Շնմարանի՝ Տէր Ներսիսեան.
Օր լիցի բարի՝ Կաղանդ շնորհալի՝ աշխարհաց համայն,
Ամէն շինութիւն՝ Նոր պայծառութի՝ Գահին Գրիգորեան։

Նոր

Ընդ բարձանց՝ տածիչ մեր կենաց՝ զկեանս Ձեր պահեսցէ,
Զթագ և զգաւազան՝ Մեհիդ Մեծուն՝ պերճ զարդարեսցէ.
Շնորհաշուք դիմօք՝ անկապուտ փառօք՝ յԱթոռ հաստուսցէ,
Զորդիս սարտուցեալս՝ 'ի բուխ փորձեալս՝ անդ ժողովեսցէ.

Ընկալ 'ի հաճոյս՝ զայս նուէր հէքոյս՝ պարծանաց մեր Ակուն,
Օրհնեա՛ զմեր Պարոյս՝ զմանկունս Հայոց՝ զՀիմնադիրն արթուն.
Որ զգարնի փառաց՝ 'ի գլուխ մեր կապեն՝ կացցէ հաստատուն,
Նմա ընդ Մեհիդ՝ մատուցի 'ի մենջ՝ գոհութ անհուն.

Տարեմուտ. 1827.
'Ի Տփխիս.

Յօրինեալ յԱշակերտէ Մէջերորդ Դասատան
'ի Մանուկէ Յարութիւնեան Արդանեանց.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ.

Ո՞վ է, զի այսչափ ակումբ խուռներնթաց,
Դպրան, կամ պշուցեալ, հանդարտ, լռակաց.
Խռնին, ժողովին 'ի հանդէս փառաց,
Հայաստան երկրի մտավարժ մանկանց.

Զարթիք, զի՞ նինջէք դուք 'ի խոր տապան,
Քաջընտիր Թարգմանք լեզուէիս Հայկազեան.
Լերհուն Գրիգորէ, Ներսէս քաջարան,
Մեսրոպ Եղիշէ, Սահակ Պարթևեան.

Եկէք և տեսէք զորդիս Արամեան,
Այլասեռ լեզուաց լինել ճարտասան.
Տեսէք երբ 'ի ժամ նորամուտ գարնան,
Պտղունք կարմրախայտ և հասուն պանծան.

Ահա յորդ աղբիւր բարգաւաճ շնորհաց,
Ընկայք ծարաւիք արբէք 'ի վտակաց.
Սաքրիչ է հոգւոց, լուսատու մտաց,
Զերծիչ տգիտութեան հոլովիս բուռն աւերաց.

Սա ղե՛կ մեզ 'ի մէջ խռովեալ կոհակաց,
Սա պատուար ընդդէմ փոթորկեալ մրրկաց.
Սա 'ի փորձութիւնս հոգի երեսաց,
Սա պայծառ աղեղն 'ի ժամ ամպրոպաց.

Սո՛ւտ առէք դուք յայս քաջատունկ յԱ.դէն,
Բուսեալ խիտ առ խիտ ծաղկօք զուարթագին.
Ա.րէք կազմեցէք փունջ քաղեալ վարդէն,
Ո՛եմ առէք 'ի մէջ չքնաղ նարգոսէն.

Բայց եթէ ձեզ Տէ՛արք սոր պատահեսցին,
Նորընծիւղ բողբոջք կամ չոր թզենին.
Խնայեալ 'ի նոսա՝ թո՛յլ տուք մնալ նոցին,
Զի 'ի սահմանեալ պահու ծաղկեսցին.

Շա՛տ է արդարեւ մանկանցս հասակին,
Խայտալ յայս նուա՛գ գունով սաղարթին.
Եւ 'ի ժամանել քաջ ժամանակին,
Տալ հասուն պտուղս ը̅ իւրոյ կարգին.

Ա.յո, ոչ երբէք բոյսք, ծառք երկրածին,
Առ ժամայն իւրեանց պտղովք զարդարին.
Ա.յլ նախ կանաչին եւ ապա ծաղկին,
Վերջապէս պտղովք պճնեալ գեղգեղին.

Ա.րդ՝ հայեա՛ց Հո՛վիւ հօտիդ առանձին,
Հայրական գթով 'ի բեր մեր չնչին.
Որպէս հայեցաւ յետ ջրհեղեղին,
Տէր 'ի պատարագ Նոյ նահապետին.

Ա.պաքէն ընկա՛լ ո՛վ Դու Հայր բարեաց,
Զայս տղհաս պտուղս մեր երախայրեաց.
Ընկա՛լ 'ի տրիտուր մեծիդ երախտեաց,
'Ի փառս եւ պատիւ մերոց Հայրենեաց.

'Ի 1827. փետրուարի 3.
'Ի Տփխիս.
'Ի Ներսիսեան Ճեմարանի.

Շարադրեալ 'ի նուաստ Աշա-
կերտէ 'ի Ներսիսեան Ճեմա-
րանէս.

## Տաղաչափութիւն.

Սուրբ ցանկալին՝ կարապետեալ՝ բնութեան,
իշխանանայ՝ դատաւորել՝ գիտութեան.
զի տեսանէ՝ զնոր աշխարհ՝ մարդկութեան,
գործել զԱյգին՝ խնամութեան՝ քաջաջան.

Չէ անհանդէտ՝ 'ի տապանէն՝ Սա Նոյեան,
յոր մնաեալք՝ յանձանձեսցի՝ ազգ Հայկեան.
զի գթացեալ՝ 'ի սպառ Հարսին՝ հեծութեան,
ուխտեաց Տէր զայս՝ մեզ 'ի նշան՝ հաշտութեան.

Այն այս նշան՝ արձանացի՝ տապանէն,
անուն Արմա՝ ընծայեսցի՝ նոր Աթէն.
և որք բարիք՝ բարի նախանձ՝ յղանցեն,
զծարաւ մնաց՝ ջրով Արին բուժեսցեն.

Աւել մի ինչ՝ մի տարակեպ՝ Թուեսցի,
զի բանաւոր՝ զառիւծս աշխեղ՝ Սա ծնցի.
որոց մռունչ՝ յունկնս ծագաց՝ լուիցի,
իբրու շառիւծս՝ Սաղամոնեան՝ Աթոռի.

Առ Հայաստան՝ ուրախացեալ՝ 'ի հոգի,
ընծայն անձայն՝ յազգս առնէ՝ լռելի.
ծածուկ ցնծայ՝ յայտնի պանծայ՝ յայս Տօնի,
լեալ խնկամուտ՝ վերի գարուն՝ յեւր որբոտի.

Արդ, գլոյ՝ Թաշկինակէ՝ յեւր դիմաց,
տխուր Որդւոց՝ առ զաւեռին՝ հրճուանաց.
Թէ որդւոյդ եւ՝ Բարձրեալն այսօր՝ մեր վշտաց,
ու Թագաւոր մերոյ՝ զԵրուսաղէմն՝ իւր ցաւած.

Յաղթող կայ՝ անմռունչ շրթամբք՝ Հայաստան,
առ բազմազգութ՝ Հայրն գթած՝ բնական.
ո՜ գրպեխ՝ բշտեմարան՝ լռութեան,
բայց բազմեալ իմ աղքատիկ՝ որք մանկան.

Այս երանք՝ հրաշէկ արեամբ՝ շարժեցան,

յոյսս իմ վաղեալ՝ ցուցին զնշան՝ գերբնական,
զի 'ի յոյս հաշտեալ՝ ընդ պաշտողիս՝ սուրբ Նոահան,
ձեռամբ հաներ՝ յուրախալէ՝ զիս Կայան.

Որ՝ այս անբաւ՝ մեծ երախտեաց՝ Նիկողին,
որում մընայ՝ միշտ պարտական՝ հողածին.
Նիկարօսին՝ զենչ վայելուչ՝ յարմարին,
որ շատանայ՝ գործովք և եթ՝ մարդկային.

Փող հարսանեաց՝ այգեստանեայցս՝ Հանդէսէ,
ազդու փողն՝ 'ի խորին ծագս՝ աշխարհէ.
գալ, զօրանալ՝ եթէ քցեն՝ ծարաւի,
անմահ Նզեերըս՝ հոգեմանալ՝ 'ի մարմնի.

Որ Նահապետ՝ հանուր ցեղիս՝ Յաբեթեան,
երկնեամ, երկնեամ՝ սուրբ զօրհնութիւնդ՝ յանդիման.
իբր Իսրայէլ՝ հինաւուրց Հայր՝ բազմութեան,
օրհնեամ զՅուդայս՝ զՇառաւիղս՝ բազմոստեան.

Նըշողեսցին՝ աստեղք Արեւուդ՝ և Լուսնով,
յորդեսցին ուղխք՝ տարած Ծովովդ՝ և Գետով.
ուղղեսցին սուրբ՝ Զայնիէդ, Շնչով միտք Թոթով,
ձեռըստու մեզ՝ լեյէ Հոգին՝ սուրբ փութով.

2 Փետրվարի. 1827 ամ. 'ի Հաշ- Յօրինեալ յԱշխէրան և 'ի
ցտէրխի Հայաստանի Աշխէր- Գրաստանէ վիճրա. և Մուրատ
տոյ 4. 5 և 6 Գրատարնոյ Ներ- յԱստէրան դըրէ Աշրոտարեանց
սեսեան Դպրոցէ.

# ԱՂԵՐՍԱՆՔ·

Մշտախնամ՝ անեզրափակ՝ բո՛ւն Լճակ,
ուստի համայնքս՝ 'ի յանէից՝ գոյացաք.
յանարժանիցս՝ առ, ընկա՛լ զայս՝ պատարագ,
ցօղեա՛ 'ի մեզ՝ տարափ շնորհաց՝ կենսունակ.

Իբրև ձկունք՝ 'ի ծով ուսման՝ արդ կայտառինք,
յոր օր յաւուր՝ ընդելանան՝ մտաց քիմք.
Դու ես որ զայս՝ դաստակարգես՝ յօգուտ մեր,
ածել զմեզ՝ յեբս դեր փառք՝ մի յամեր.

Մե՛ր են չարիքս՝ մեր են յանցուածք՝ որ այսքան,
կամք խրթնացեալք՝ 'ի պիտանեաց՝ մարդկութեան.
Ո՛ Օժանդակ՝ յոյանի և դաշտ՝ Թորգոմեան,
զներունդս նորին՝ պահեա՛ Աջովդ՝ անսասան.

Անկցին գլխակք՝ բարձցին արգելք՝ մեր ուշից,
տու անսայթաք՝ մուտս առ նելքդ՝ իմաստից.
Դու անդաստին՝ մեզ պաշտպանի՛ր՝ 'ի վտանգից,
լինամ տէ՛ր արդ՝ որպէս միում՝ ծառայից.

Աչք մեր բացան՝ դիտել բարի և զչար,
ընդո՛, ահա՝ 'ի Աղթարանդ՝ Հայրաբար.
ժամ առեալ մեր՝ ձեռամբ 'ի սուրբ՝ Քո դադար,
լե՛ր ընդ մեզ միշտ՝ որպէս և իսկ՝ խոստացար.

Օ՛ հինաւուրցս մեր Մովսէս՝ հոգելից,
անզրաւական՝ բարութեամբ քով՝ զՄա լի՛ց.
և զՅեսուս՝ յաջորդ Մոսին՝ մարտակից,
ամրապահեա՛ անտես խնամով՝ յարկածից.

Եւ մեր փոքրիկ՝ յայս երամակ՝ Հայկազեան,
Թևատարած՝ սուրբ Աղաւնիդ՝ իջևան.
հոգահամբոյր՝ երկրպագեմք՝ Տեառնդ անուան,
ակնարկեա՛ յայս՝ Ազէդ 'ի Քէն՝ ընկական.

'Ի Նմին աւուր՝ յաւարտ Հարցափորձին։

Դպրեվանս 'ի Նմանց։

Ո՛չ թողու Տէր զգաւազան մեղաւորաց ’ի վիճակս արդարոց.
Սաղմ. ճԻԴ. 3.

Մատչիմք առաջի՝ այկզարդ սուրբ Հօր՝ Մեհիդ Օծութեան,
փայլեալ զաւետիս՝ խնդալից հողուով՝ ’ի ձայն ցնծութեան.
Ըստ սուրբ Հայրոյն՝ նոր դար ոսկեզօծ՝ ամ երջանութեան,
’Ի կապար արկին՝ զքոյդ վիշտ դառնաղէտ՝ անհուն, անսահման.

Ո՛վ որ տեսանել կարծէր զՀայաստան՝ գերծ ’ի Թշնամեաց,
Ո՛վ միշտ զտագնապ՝ համբուրէր, հեղձնոյր՝ յայլս տանջանաց.
Ե՛կ, եկ այս զգալի՝ զի Թագ, Գաւազան՝ մեր Թագաւորաց,
Բարձան ’ի գլխոյ՝ և մեք կործեալք՝ ըստ որբոց, այրեաց.

Ողբալի նեղիչք՝ դժնեայ կեղեքիչք՝ յամենուստ յարեան,
Գրոհ եառուն ’ի հօտ՝ անհովիւ, անտէր՝ և անօգնական.
Գերիք մեր սփռեալ՝ ընդ աշխարհ համօրէն՝ բարձին զկական,
Ծովացեալ տեսին՝ գետօրէն հոսեալ՝ զարիւն Արամեան,

Ո՞ւր է Բաջազդի՝ Հայկ մեծ առաջին՝ սատակիչ Բելայ,
Զարթիցէ, տեսցէ՝ տօնեսցէ ընդ մեզ՝ զայս հանդէս ներկայ.
Զի՛ Նիկողայոս՝ Արիւն չնորհալոյս՝ Երկնընծայ Արքայ,
Կամեցաւ, բաշխեաց՝ զանձառ փրկութիւն՝ տանն Արարատայ.

Այն ինչ եդ ’ի գլուխ՝ բղխառաց պսակ՝ մեծ Կայսերութեան,
Կանուխ ձեռն էարկ՝ ելանել, փրկել՝ զազգն Ասքանազեան.
Ահա քաջալանջ՝ արի Զօրականք՝ Նորայն Տէրութեան,
Հասանեն, տիրեն՝ Գաւառէժ քաղաքի՝ ’ի սիրտ Պարսից տան.

Ո՞ւր են անառիկ՝ ամրոցք ամրակուռք՝ ապաւէնք Պարսից,
Ընկձեալ խորտակեալ՝ ’ի վայր կործանին՝ ’ի Թնդանօթից.
Մի՛ Թէ ըղձօրաց՝ բարբարոս ազանց՝ աստէն լռեցին,
Որք արդ քաջ ծանեան՝ Թէ Զօրաց Ուսսաց՝ Տէր է մարտակից.

Զարթիցէ՛ զարդիս՝ Ձնծեսցէ հանդարտ՝ Բագարին Տիգրան,
Հանցէ՛ յերեան՝ զեօթնագլուխ վիշապն՝ զԳրօշակին նշան.
Թուեսցէ հօլանի՝ Արծուին Հիւսիսոյ՝ հզօր, երկգլխեան,
Մայրապէս խնամէ՝ զանոյժ ձագս նորա՝ սիրով անպայման.

Եւ

Այցէ նուագաքայլ՝ բարեպաշտ խոնարհ՝ Թագաւորն Ղաջար,
Գոհիւ ընկալցէ՝ զնոր Թաշկինակ՝ ազգին ողջարար.
Զոր արդ փրկաւաք՝ Կայսր, Հայր և Տէր մեր՝ հանուրց Բարերաց,
փութացոյց առ նա՝ 'ի հեռաւոր վայրէ՝ նշան սիրաբար:

Որէ Դու արի՝ Մեծազօր Տրդատ՝ գառն վերաձայնեալ.
Աշանաւ գառին՝ հայրօրէն սիրով մեզ Թագաւորեալ.
Ահա որդիք քոյ՝ յամենի գոյլոց՝ դերահրաշ զերծեալ,
Ընդ Թեւով Արծուոյ՝ Մեծ Թագաւորի՝ են ապահովեալ.

Յնծա՛, ուրախ լեր՝ հիւսեամ քեզ պսակ՝ Մասիս պանծալի,
Զի հանգեաւ 'ի գլուխ՝ լերինդ բարձու՝ տապանն Յիսուսի.
Նոյին դիզացեալ՝ բազմահեղեղ ջուրք՝ անձրևք սոսկալի,
Յամաքեալ երկիր՝ երփնազարդ փայլեալ եղև ծաղկալի:

Դու Մասիս անտես՝ սիրատարփ ըղձիւ՝ արշաւեամ, գրկեամ,
զՆերսէս շիւղաքեր՝ Ռշտունիդ շնորհաց՝ սիրով համբուրեամ.
Որ արդ փառաշուք՝ նստեալ 'ի ծոց քո՝ կայէ զԹագ դաշնեայ,
'Ի գլուխ սիրասուն՝ տեառնասնունդ որդւոց՝ Մեծ Աշխին Հայկայ.

Լո՛ր, Հա՛յր մե՛ր բարի՝ ուստի՛ լեռաշնորհ՝ ուստի՛ այս Որհի,
Որ խնամք, տածէ՝ անձամբ պաշտպանէ՝ Հայկական սեռի.
Ի սա նոր Յովսէփ՝ ցուպ Ռոյդ ծերութեան՝ ապնի՛, մնացի,
Գովելի Կայսեր՝ երկնից գթութեանց՝ Գործի սխրալի.

Միաբան գոչեմք՝ զԱստուած աղաչեմք՝ 'ի բոլոր սրտէ,
Զի զայս նոր տարի՝ բարելից յաջող՝ անփորձ անցուսցէ.
Զերկրորդ Սիմէոնդ՝ և զՅովսէփդ զգօն՝ 'ի չարեաց զերծցէ,
Զանգին կեանս Ձեր՝ 'ի պարծանս Ազգիս՝ նա յերկարեսցէ.

1828 Յունուարի 1.
Տփխիս.

Ծառայեալ յԱստուածչէ երրորդ Գրատառան Ուսումնարանէ Հայոց 'ի Մոսկուէ Յարու-թիւնեան Արդանեանց:

Պարծանք զօրութեանց Ազգաց Դու ես Տէր, և ՚ի հաճս Քո բարձր եղի-ցի եղջեւր մեր. Սաղմոս. ձը. 18.

## Տաղաչափութիւն առ 1828 նոր Տարին.

Երգեսցին երգ նոր՝ ձայնիւ քաղցրութեան՝ յայսմ առաւօտի,
քաղցրասցին նոյն երգք՝ ՚ի նուագ Պիերեան՝ հելցս Իտալի.
ձայն ուրախութեան՝ զոյգ ընդ գոհուն՝ Տէր քեզ բարձրասցի,
Քոյդ անսպառ շնորհօք՝ ահա մեք հասաք՝ ՚ի նորս այս տարի.

Ահա գեղափայլ Արշալոյս ասուրս՝ յերկինս տեսանի,
ոսկեզօծ փայլմամբ՝ յիւր պերճ խորանէ՝ նշուլիւ ծագի.
պերճափայլ լուսով՝ ընդ Լիբեան բերէ՝ մեզ նոր դար սկի,
նոր շնորհ Արարչի՝ նոր պարգեւ չքնաղ՝ զմեօք առ փարի.

Ահ, զինչ տեսարան՝ շքեղ պանծալի՝ առ ինձ երեւի,
յոր սուգ բազմամեայ՝ յերեսաց հանուրց՝ ՚ի սպառ փարատի,
ցօղ քաղցրածաւալ՝ բարութեան Հաստչի՝ այսօր առ ցօղի,
զուարճացեալ հեզս՝ աներկմիտ ձայնեմք՝ շնորհաւոր Տարի.

Նոր է այս հանդէս՝ նոր ձիր Արարչի՝ տանս Աքանազեան,
այո, նորաքանչ՝ բայց ոչ անարդիւն՝ որպէս Աստիկեան,
ընդ մեզ հաշտութեան՝ Հաստչին նոր ծագի՝ պայծառ ծիածան,
Եւ հրաշիւք փրկէ՝ յանդրոյ դառնութեան՝ այլին Հայաստան.

Յանձն, ուրախ լեր՝ Հայաստան աշխարհ՝ քաղցրիկ Հայրենի,
զի ՚ի Քրիստոս բարձան՝ ամպք մրրկայոյզ՝ ձախող վիճակի.
ոչ եւս բռնեսցիս՝ ՚ի ցուլ փաղարեան՝ անօրէն ազգի,
անեղ Խորհրդեալն՝ Աջոյն զօրութիւն՝ է Քեզ հովանի.

Նուինդք Քոյդ որդոյ՝ ՚ի շքեղ հանդիսի՝ գեղգեղեալ պանծան,
պատուեալ գքուրձ՝ անփարատ սգոյ՝ անպայման ցնծան.
կանգնեն զանյողդողդ՝ զհաւատարմութեան՝ զարձան անսասան,
յոր գիտօղք գոչեն՝ այս ազգի Հայոց՝ է գործ սեփական.

Մեր նա՛ մեր Թագչիւ՝ յայս խրախ հանդիսի՝ Հսկայդ Բեկլարեան,
հայրախնամ տածիչ՝ զսերունդ քոյ խղճուկ՝ յիւր չքնաղ փայլման.
Եկ, լուր զրուցատրց՝ զոր քեզ ընծայէ՝ Մուսայն քաղցրաբան,
պսակ քեզ կազմէ՝ ՚ի չքնաղ ծաղկանց՝ լերին Պառնասեան.

Ահա

Ահա՛ վերստին՝ բոցափայլ լուսով Հայաստան աճնի,
գետ դառն արտասուաց՝ բազմամեայ վշտաց՝ յերեսաց սրբէ.
սիրտ նորա նեղչի՝ մաշուէտ վշտօք՝ այսօր տագնապի,
Արծիւ երկգլխի՝ հզօրն Ռուսսիայ՝ վրիժառու լինի.

Նորահրաշ փառօք՝ զնախնդակ հանդերձ՝ զգեցցի հարսնաւն,
այրի, տառապեալ՝ սուրբ Եկեղեցի՝ բամիցս Արամեան.
ելցէ ընդ առաջ՝ գրկեսցէ սիրով՝ զՕծեալ իւր փեսայն,
Արարչին հանուրց՝ հեղլով զարտասուս՝ անվերջ գոհութեան.

Բայց զի՞ վայրապար՝ խնդալ հրաւիրեմ՝ սէ՞ր զԵկեղեցի,
որ առիթք սգոյ՝ աղէկեզ լալոյ՝ են բազմադիմի.
ահ՝ ո՞ւր է արդեօք՝ քաջազարդ Հարսին՝ փեսայն փառացի,
՚ի վիշտս վարակեալ՝ մեղկադէմ ողբայ՝ նստեալ մեկուսի.

Ժամ է այց առնել՝ ցանկալի Հարսին՝ Տէր մեր տօնելի,
տարագրել ՚ի սպառ՝ ոչ ես զԲէն դրել՝ ՍՓԻՆՔՍ վշտալի.
Յայնժամ գերահրաշ՝ տօնեսցեն երկինք՝ զայս տօն պանծալի,
և մեր բազմաղէտ՝ առիթ Թախծութեան՝ համբուն չքասցի.

Ի Տփխիս.

Շարադրեալ յԱստուածատրէ երէցուէ
Պաշտօնեայ ՚ի Եկեղեցւոջ Յով-
հաննիսեան Եկեղեցւոյն.

Պօէմ է նախնական չարեգակն հանել 'ի գոհութիւն Մասեաց, և յաղագս զոր
զծագել լուսոյ յանդիմանն ընթել Մասեաց. Եսայ. ժէ. 28.

Նուագերգութիւն առ 1828 ամին.

Այնխնեցին տանէն՝ բոլոր բանասիրաց՝ 'ի դրոշմաց ստրկեան,
բաղմարուճեստ բանիւք՝ կազմել յօրինել՝ զհնար տամնաղեան.
զի այսօր շրջան՝ աւուրց և ամաց՝ առեալ զվախճան,
հրաշադեղ կարգաւ՝ հորդեն զընթացս՝ այժմ նորակենդան:

Իսկ որ մաղթենք քաջ՝ յարուցեալ զմարճ՝ անգ յառաւօտուն,
այլ ամէն յուշիկ՝ ձեմէ ընդ երեկս՝ ժամանել ժամուն.
միմեանց աւետեն՝ զկորուստ ամենից՝ 'ի տեսակ նորուն,
սրտառուչ բանիւք՝ ընծայեն զտենչ սուրբ՝ սիրով պատարուն.

Որ սիրտ պարառած՝ յայգորել միմեանց՝ արդ ոչ կակղասցի,
կամ ով ամբարտ՝ լեալ իրաւախոհ՝ յանքեան չըզգասցի.
տեսեալ զայս հրաշունան՝ մարդկան բնաւից՝ ոչ կրկաթեսցի,
այս բովանդակ՝ սիրտ քնքուշ կամ բիրտ՝ անդէն մեղկեսցի.

Բանցը է աստանօր՝ մեզ ներդաշնակել՝ զհամայն ցնծութիւն,
թէ 'ի յորդ հոգիս՝ քանի՞ համադամք՝ հոսհոսեն զեղուն.
բայց երբ հայեցեալ՝ 'ի մարդս ծաղկաւէտս՝ սեթևեթս զգենուն,
և կամ 'ի հանուր՝ աղդ չքնաղ թռչնոց՝ որք երգըս առնուն.

Որոց աղագաւ՝ խնդակցեալ նոցա՝ երգեմք քաղցրաբար,
տողիւ փոխառմոխ՝ օրհնելով զայդուն՝ զշող լուսապատար.
որով արարածք՝ յապուշ գրաւեալ՝ խնդան տրամասպառ,
և առ հասարակ՝ սերտ դաշն ձայնիւ՝ առնեն գեղապար.

'Ի զնին իջեալ՝ պայծառ հրաշունոք՝ զմարթնոց դումարտակ,
'ի յայտ երեւին՝ բերկրալից դիմօք՝ մեզ բարետեսակ.
ձախրեն յեւեկէջս՝ առնուն զշրջանս՝ քաջ կանոնաձեւակ,
ընդ Հայաստանի՝ զփաղփուն փառաց՝ պարգեւեն զպսակ.

Դու պանծայ աւեն՝ Հայաստան նեղեալ՝ յանէտանից վշտաց,
զի անցին ահա՝ խորին հառաչանք՝ պարենք թախծութեանց.
ցնդեցան 'ի յօդս՝ զմեքաղք երկիւղից՝ տագնապք Հայրենեաց,

զհետ

զհետ եկին նոցին՝ յուռթի բերկրութիւնք՝ բազմաբաղձ աչաց ։

Ուրախ լեր ո՛ Պուսար՝ վերնոյն Միածնի՝ Պոահ Լուսաւորչեան,
զարթի՛ր զորդիս քո՝ պարուք և թմբկօք՝ գալ յայս տեսարան։
զուարճանալ խնդալ՝ նոր զարմանալեօքս՝ ՚ի տանն Նոամեան,
որ ցարդ սրտայեր՝ ո՛ւր է իւր փեսայն՝ իւր անձին պաշտպան։

Ահա ՚ի բացուստ՝ շուրջարկեալ զիւրև՝ զգօտի ծիրանի,
ճեպէ կաթողին՝ առ քեզ ձայնելով՝ ո՛ իմ աղաւնի։
վայթ բայց զուարդաստ՝ եւ ինձ ընդառաջ՝ Հօրոն իմ սիրելի,
զի իմ խանդակաթ՝ համբոյր Տեառնաւանդ՝ Քեզ մատուցանի։

Քամէ արդէն իսկ՝ Քոյդ բոլոր Հօտի՝ փեսայ անարատ,
զալոդի առնուլ՝ ՚ի տածիչ թեւոյդ՝ լինել անանջատ,
միաբան գոչել՝ համաձայն ասել՝ Թող տիրապատուաստ,
Տէր ՚ի Քէն անհաս՝ սպառսպուռ հերքեաց՝ թշնամեաց զաստ։

Յունվարի 1.
1828. Տփխիս

Շարադրեալ յԱշտարակէ Վեցերորդ Պատա-
տան ՚ի Յովհաննէ Շիրմազանեան Սարդանեանց։

Առէ՛ք սաղմոս և տո՛ւք օրհնութիւն, սաղմոս մատուցէ՛ք նմա 'ի ձայն ցնծ-ութեան: Սաղմ. Ձ. 3:

Շքեղ տեսարան՝ պանծալի Հանդէս՝ այսօր տեսանեն,
Ուր դասք քաջազանց՝ Հոգւով խնդալի՝ սատէն ակմբին.
անձառ բերկրանօք՝ միմեանց աւետեն՝ զշնորհաւոր տարին,
զանլուռ օրհնութեան՝ նուագ երգելով՝ Հանուրց Արարչին.

Սքանչացի Աթէնք՝ յայս մեր նոր կաղանդ՝ յայս դաս փառացի,
խոր ակնարկեսցէ՝ յակնձիւս կալով՝ մեր տեսարանի.
նոր արձան ընտիր՝ Կայսեր բարերար՝ 'ի սիրտ կանգնեսցի,
գլխանցէ աշխարհ՝ թէ չեմք մեք ծառայ՝ Րէլայ երկրորդի.

Օ՛ն և՛ս յապաղես՝ Մուսայդ քաջարուեստ՝ յայսմիկ Հանդիսի,
կակուղ, վարժ մատամբք՝ Հարկանել բղլար՝ քաղցրաձայն քնարի.
տե՛ս, ահա՛ երկինք՝ Հանդիսիւ՛ տօնեն՝ զայս տօն պանծալի,
գումարտակ զուարթնոց՝ խնդակցեալ մարդկան՝ ցնծան Հրաշալի.

Ահա՛ լայնալիճ՝ աղեղունք չարաց՝ 'ի սպառ խորտակին,
յերեսաց զինուց՝ քաջարի զօրաց՝ փախչել խուձապին.
խրթնացեալ, անզարդ՝ տաճարք Այ̄՝ կրկին զարդարին,
Հոգեղէն փառօք՝ Հիւսեն զնոր նուագ՝ մերոյ Արարչին.

Բուեսցին լալիք՝ անբախտ վիճակի՝ Հայկազեան սեռի,
վերասցի 'ի սպառ՝ աղէկէզ մորմոք՝ ցաւած մեր սրտի.
տագնապ մահաշունչ՝ չար բարբարոսաց՝ անհետ ջնջեսցի,
մի՛ նոր ամ պայծառ՝ այլ Դար շնորհատու՝ այս օր ձայնեսցի.

Արի՛ Հայաստան՝ Հա՛ն զքոյդ պատմուճան՝ խաւար տրտմութ̄,
զանդուլ չարչարանս՝ դարաւոր վշտաց՝ արկ 'ի մոռացման.
փառացս յաղթանակ՝ քեզ լիցի զարդիս՝ դեղ մոռացութեան,
ոչ երբէք յիշել՝ քեզ վիշտ լեղուահամ՝ զհարուած, զկործան.

Ճախրեսցէ ընդ յօդս՝ թռիչս առեալ՝ փիւնիկն Հայաստան,
շատ տառապանօք՝ յստակեալ 'ի բովս՝ Հրոյն նեղութեան.
պճնեսցի 'ի շուք՝ 'ի զարդ գեղեցիկ՝ իւրոյ Հարսնութեան,
զբազմաթիւ որդիս՝ տածցէ ընդ թեւովք՝ իւր սուրբ Մայրութ̄.

Զեմք

Ձեմք ամենեւին մոռացեալ դրեզ՝ Դուստր Սիոնի,
զԳեղոյդ լուսազգեաց՝ զհամաքառակդ՝ Մետուղիքեան երկնի.
մի՛ լար դառնապէս՝ զանձնատուամբ 'ի Քսէն՝ Քս սուրբ Փեսայ:
որ փոյթ հանդիցէ՝ յերկնատիպ Գահոյս՝ Քսոյ առագաստի.

Նոր Տէր Թախծագին՝ ողորմ հեծութեանց՝ Հարսին տրտմալի,
որ անկեալ 'ի վայր՝ ոչ ինչ ցնծութեան՝ յանձն իւր ոչ ունի.
յայնժամ սիրատարփ՝ ցնծուք հոգւոյ՝ ընկերեալ խայտասցի,
երբ շուշանափայլ՝ բաղկօք Փեսային՝ դարձեալ գրկեսցի.

Արեգակոյդ աւուրք՝ տխուր ձմեռան՝ փոյթ վաղվաղ անցցէ,
անգութ գերանդի՝ Կռոնոսի ծերոյն՝ անգործ մնասցէ.
զեփիւռ քաղցրաւէտ՝ 'ի Հիւսիս կուսէ՝ 'ի մեզ շնչեսցէ,
յայնժամ խանդակաթ՝ իջեալ 'ի խնդիր՝ զողջոյն քո հարցցէ.

Հրճուեսցին յայնժամ՝ դերագանց շնորհիւ՝ մանկունք Սիոնին,
պարառեալ ընկերեալ՝ մատուսցեն զխաւս՝ բոլորից Փրկչին.
ընդ զուարճացուցիչ՝ հովանեաւ Աջոյդ՝ շուրջ ժողովեսցին,
ալեզարդ Սեհիդ՝ քաղցրիկ օրհնութ՝ ծաղկեալ փթթեսցին.

1 Յունուարի 1828.
'Ի Տփխիս:
'Ի Ներսիսեան Դպրոցէ:

Շնորհեաց Աշակերտ Միջերորդ
Դասատան Դպրոցիս Ներսիսեան,
Սարգսեանց.

## Բանաստեղծութիւն ամանորին ամսոյ 1828 նոր ամի.

Ուրախ եղէք ժողովուրդ ամենայն որ խնդայք օրհնել զՏէր, և ամենայն յորդ- տեսէք զգործս նորա: Սաղմոս. ՃԺ. 15.

Յաւիտեան ահաւոր՝ համարձակ յաղթիւ՝ ընթանայ իւր բան,
անլռելի քարոզէ՝ մեծ վստահութ՝ զայս Օր պատուական.
ունելի իւր կանխեալ նուագեալ արդէն՝ զերդ ուրախական,
ցնծացէք համայն՝ զմեծ ցնծութիւն՝ Պետրոս Հայկազունեան.

Տօնեցէք վայրկեանք՝ ժամուք, բաղխիք՝ զաւուրց ձեր խնձան,
Այս ուխտ և շնորհ՝ Այս Այր և պարգև՝ սուրբն քանակեան.
փայլեցոյ Հռոմ՝ պայծառ, պանծալի՝ զայս տիւ հրաշագան,
և մի մերժանէր՝ անմահին Արամ՝ զոհից անմեծան.

Ո՜յր պայծառ՝ 'ի յարևան մարտի՝ մարտին յաղթական.
Հակադարձ որոյ՝ տուժի չարաշար՝ մեծ փախստական.
յորոց առաջին՝ կայ տեառն առաջի՝ երբուս ախոյեան.
խոսեց և Թուրքի՝ յանկիստ խաւար՝ երկրորդն անպատուան.

Արդ է եռկապէս՝ կեանք մեր ազատ՝ ցաւոց տեսարան.
պսակիմք, պճնիմք՝ Թէ եմք մարտուցեալ՝ հոգւով քաջութեան
ընդ կիրս, ընդ աշխարհ՝ Է դև ցանկութ՝ ըմբոստ Տիրական.
եսկ Թէ լռուցեալ՝ հարկ է 'ի հարկէ՝ կշռան ուղղութեան.

Այս օր մնձաւր՝ ուղղաբաշխ Հօր մեր՝ դատուն ազգօղմեան,
որդար ակնարկէ՝ հաւասար հայր՝ մեզ յաւիտենական.
Այլ, որ ձայնէ առ նա՝ յաղթեցի, զբարձր կայեալ 'ի բերան,
համբուրի սիրով՝ մեզ յուրախութիւն՝ լռէ Հայրական.

Պօղոսին բանք իմ՝ մինչ յիշատակեմ՝ ըղձեալ սրտամեան.
Ո՜հա ողջոյն՝ կայ ինձ ուշադիր՝ յայս երջանկութեան.
բախտաւոր կարդայ՝ ինձ տուն Հռոմայն՝ յիւր անձինք մասնեան,
յղէ զեւր Հօրէն՝ ձնալիլ, խնդակցիլ՝ ընդ մեր Հայաստան.

Զի մեզ դէպ 'ի խորշ՝ Թափել, Թարթափիլ՝ նախնի Հնոյն,
զանցին յետադարձ՝ յաղթանակ բարձեալ՝ զխաչին նշան.
պարծեսցի Աթոռն՝ Մայր մեր լուսածին՝ յայս Պապ մեռուցիկեան,
բարձրասցի փառօք՝ նոր Պապադրոնին՝ կարգեալ զայս ինքեան.

Երգումք երկնաբերձք իբր Երեքոմէն 'ի վայր հոսեցան,
գերեք դեգերեալք՝ [illegible] 'ի դժոխոց՝ ազատեալ զերծան.

վիշտք, տագնապք, արհօրք՝ անհետ, անշիմար՝ գլխովին բարձան,
Թշնամիք Սօր մեր՝ վիշապք վիթխարիք՝ 'ի սպառ ոչնչացան.

Այսօրիկ տարւոյս՝ պտուղք արմտիք՝ լի, ձոխ, սուրբ սեղան,
որովք զմայլին՝ ներքին արտաքին՝ կերք զգայական.
բարիք, որք միան՝ անեղծ, անթարշամ՝ 'ի ծոց բնութեան,
ուստի բուրեսցի՝ ազգէ յազգ 'ի Հայս՝ հոտ անմահութեան.

Զարթնու ժամանակն՝ և զարթուցանէ՝ զմեր Հայաստան,
զարթիր, զի աւէ՝ երթամ հրեշտակել՝ որդւոցդ հեռակայն.
պատգամել նոցա՝ 'ի քէն և 'ի քոց՝ զայս Որ փրկութեան,
զոր և խոստանամ՝ կնքել 'ի ճակատս՝ յանխախտ արձան.

Ջնջեա՛ Նախամայր՝ ըզքո սբ զարտօսր՝ զոր լաս ցայս վայրկեան,
բա՛ց քո զառագաստ՝ հայեա՛ց 'ի Հիւսիս՝ 'ի մայր ցրտոյ, ձեան.
տե՛ս, ուստի ծագի՝ արև փարատիչ՝ քո հին մթութեան,
այնու հանդերձեա՛ յԱստուած և 'ի Մարդ՝ նուէր Օրհնութե.

Դուեհք և փողոցք՝ աւանք, շէնք, շուկայք՝ գոհութ̄ պանծան,
լերինք, դաշտք, հովիտք՝ տարափով շնորհաց՝ լցան, լիացան.
եթէ մեք լռեմք՝ քարք աղաղակեն՝ և այս ամենայն,
մեծ է Տէր Աստուած՝ մեծ է կար Նորա՝ գոչեն միաբան.

Ա՛խ, ամբիծ, մաքուր՝ փեսայ մեծարեալ՝ Սուրբ Արարատեան,
այս, ո՛րպիսի ինչ՝ զի աչք մեր ձնշեն՝ ցօղ խնդութեան.
դարն է երջանիկ՝ եթէ դարաւորքն՝ խնդիր պատուական,
որ յուզէ, շրջի՝ 'ի դուրս իմաստից՝ ընդունել զարժան.

Արդ կան և մնան՝ մեզ երկեակ պարտիք՝ պարտուց հատուցման,
զոր յարդ [illegible]րագոյն՝ աւուրս ստիպէ՝ լնուլ զայս պայման.
քանզի և զայն՝ բազխէ հանապազ՝ Բանն տէրունեան,
տո՛ւք Կայսերն, Կայսեր՝ զԱստուծոյն, յԱծ՝ մի յոք պարտական.

Ընդ որս քո ձայնունք՝ ժողովեալք այժմիկ՝ ընդ Թևովք սրբութ̄,
գոչեմք համօրէն՝ կացցէ և կեցցէ՝ Սիւնդ հաստատութեան.
մինչև լցասցին՝ բախտին Հայրենեաց՝ Թիւ, չափ, և սահման,
յայնժամ հանդիսուք՝ հոգիք վերժողովեալք՝ 'ի խաղաղութեան.

Ի Տփխիս.

[illegible]
[illegible] Գրիգոր [illegible]

# ՏԵՍԻԼ.

Յաղջամուղջ գիշերի 'ի տեսլեան տխրագին
յարուցեալ Թափառիմ յանծանօթ 'ի՞ դաշտին.
ընդ էնև ոչ ուղի ոչ շաւիղ երևին
ընդ կապոյտ քող երկնից սևաթոյր ամպք կուտին.
տխրատ իմ, միաք՝ յայլանդակ 'ի կարծեաց խիստ յուզին
յակամայս զիս մղեն առ կատար մի լերին.
յանցնիլս քայլափոխս խոչ և խութք ծնանին
այլ անտես ձեռք ուրուք անկործան զիս ունին.
յանկմանէ զիս պահեն 'ի վախից մեկուսեն
յապահով յարահետ պողոտայ վերհանեն.

Արդ ինչ ես անդր հասեալ ուշաբարձ տրտմադէմ
անթարթափ սառն աչօք զեակ ինչ որոնեմ,
յանկարծուստ 'ի բարձանց զահաւոր ձայն լսեմ
յԱրարատ երկնահաս գագաթան վեհ տեսանեմ.
Հրաշագեղ դպրութիւն յաջ զուարթնոյն նշմարեմ
յոր հայիլ սարսափիմ մերձենալ ոչ իշխեմ.
առ փողէ սաստկաձայն յորմէ ցարդ սասանիմ
խմբեսցին առ դոյն բոյլք հոգւոց լուսաճեմ.
որք վարուք և արեամբ և քրտամբք ուղղաճեմ
առողջեալ զՀայաստան արարին նոր Եդեմ.

Յակմբիլ լուսերամ երկնաքնակ սուրբ հոգւոց
յայս ատեան ահաւոր շրջապատ 'ի զուարթնոց
առ ժամայն զլերամբ շուրջ պատի հուր և բոց
շառաչին ուժգնակի գոչք վերնոց մեծ փողոց.
կայծակունք հողեբեկք ցոլանան 'ի յամպոց,
Նիստ լերինն հիմնովին սասանի յոլորտոց.
մրրկայոյզ փոթորիկ սուլէ յոյժ սաստկակոծ
Թաւալին 'ի կայից ատեղաց բոյլք ծերոց.
համբառնան դրունք երկնից զեղու լոյս անմատոյց.
ակն ունի բնութիւնն եկի Տեառն՝ աստուածոյ.

Բոյքայի գոյութիւնս յահաբեկ տեսլենէս
հոտ մահու առ քիմս իմ մերձենայ յայտնապէս
ահա սիրտ մեղմաշունչ հնչէ քաղցր օդոյ պէս

խաղաղէ՛ զխռովեալ հնաշխարհիկ զհանդէս.
զգեստուք լուսազարդ ոսկեղէն դասք անդրանկաց.
ակնարկել սարսափին Որ Երին յեկ փառաց.
հիասքանչ ձայն լսի երգասաց նուագաց
յօրհնութիւն Նմահին Խնամարկուի մահացուաց.
մեծ ատեանն ապա լուռ ակնունի հրամանաց
Նուարչին յոյր աջ է չափ, կշեռ իրաւանց.

Հռոմայէ. Մերկացի քուրձ սգոյ Հայաստան
պճնեսցի յիւր շքեղ ոսկեխայտ պատմուճան.
լուասցի յարտասուաց դառնաւոր տրտմութեան
խնկեսցի հոտ յանոյշ երկնաբոյս կնդրկան.
տո՛ւք նմա զքօղ կարմիր նախեղակ Հարսնութեան
հնչեցէք յարարածս զերգ փառաց յաղթական.
քարասիրտ ոխերիմ խորամանկ անպիտան
Թշնամիք եղկելոյս առ ժամայն բերկրութեան
պրկեսցին 'ի կապանս անուղատ գերութեան,
մատնեսցին չարաչար անվախճան նեղութեան.

Հինաւուրց Օծեալն իմ յիւր Գահոյս արդ դարձցի
ուաթոյր ամպ սգոյ 'ի Նմանէ հերքեսցի.
կեանք Նորա դառնացեալ աղէտիւք սոսկալի
բարութեամբք, բերկրանօք, ցնծութեամբք փայլեսցի
յոյր անուան ՍԷՐ՛Ն ԵՍ է՛ Օծեալն իմ յայն յեցցի
և Հարսն իմ անարատ ընդ նմա միասցի.
յայն իմ ուղիղ օրհնութեան հաճութեան յորդեսցի,
Հայաստան զառամեալ առ նորա մանկասցի.
Գահն ոսկի մոռացեալ արդ կրկին յայտնեսցի,
սեռն Հայկայ յանաղարտ խնդութիւն զմայլեսցի.

8 Հոկտեմբերի 1827.
ՏՓԽԻՍ.

Աշոտյ Աշ շակերտ ծերերորդ Գ[illegible]
Գրիգոր Ցուլուեբեան Մեսրոպեան.

Աղհա չափով երգեր շառաւորեալ ինձ հայր շնորհալեան ինձ՝ որպէս ունէր է։
Սաղմոս. ԼԲ 6.

Զայնարկեալ առ ձեզ՝ լերինք ամպամերձք՝ տանս Աքանալեան,
մատչիլ հրաւիրեմ՝ յայս դար ոսկեղէն՝ ՚ի նոր յայս խրախճան
ահա նոր տարի՝ նոր ամ փրկութեան՝ սեռի մարդկութեան,
զուարճացէք այսօր՝ տօնեցէք ընդ մեզ՝ զայս օր խնդութեան։

Եկէք զգայութեանց՝ սիրով բորբոքեալ՝ զուարթ բերկրանաց.
ցանկայ տեսանել՝ զգումարտակ զուարթնոց՝ վերին Պետութեանց.
Թէ զիարդ փողին՝ զձայն քաղցրութեան՝ ՚ի լուր ականջաց,
դիւրէ ինչ արագ՝ ձայնել չկարէ՝ զնոցին հրճուանաց։

Ահա տեսանեմ՝ բազմակայ յինէն՝ զգրոհ բանակարգաց,
խանդակաթ ընձեն՝ հոգւոյն ինքնաշարժ՝ հիւսեն զերգ փառաց.
զինչ է Որփէոս՝ յայտնի աշխարհի՝ անզոյգ երգասաց,
Պինդար, Ապողոն՝ քաջաբան երգիչք՝ անմահ Մուսայեանց։

Զիա՞րդ կարացից՝ հայթհայթել զբան՝ արժան ՚ի դրուատ,
անդուլ վաստակոց՝ երախտեաց Ձերոց՝ քաջադէպ հանդարտ.
կարկեալ կապկապի՝ լեզու թերավարժ՝ բնութեանս նուաստ,
առ բարձրաձայնել՝ զայս հիւսուած բանիս՝ նուանդեանս աւանդ։

Արծարծեալ այսօր՝ ՚ի սէր գերապանծ՝ մեծ ուրախութեանց,
սիրտ իմ սիրաշարժ՝ ցանկայ յերկարել՝ զայս ժամ գերազանց.
սէր իմ կաթոգին՝ սիրտ իմ բոցավառ՝ եռան չափազանց,
դրդեն հարկանել՝ զլարս ընչեն քնարիս՝ ՚ի գով Հայրենեաց։

Ո՛վ Սուրբ Հայրապետ՝ շառաւիղ Լուսոյ՝ ՚ի պերճ Հայաստան,
դու մշակ անխոնջ՝ խրախոյս մեր ազգի՝ ցուցար աննման.
բարձցի առ ՚ի մէնջ՝ չարատանջ անուր՝ մեր դառն անձկութեան,
Նետք անդուլ հինից՝ քոյով օրհնութեամբ՝ չքասցին համայն։

Արդ շնորհ արասջիք՝ յայս չքնաղ հանդէս՝ աւուրս բարեաց,
զուարճանալ խայտալ՝ խրախոյս ծնութեան՝ տալ բարեկամաց.
խանդակաթ դիմօք բերկրալի մտօք՝ ճշգրիտ հրճուանաց,
Հայրաբար սփոփել ըղձիւք, ընդհուպ Ձեր եւս զաւակաց։

Սն

Նման եղջերուաց՝ կարօտ աղբերաց՝ առ Քեզ դիմեցաք,
Պետ Ընծատեալ՝ տենչամք օրհնութեանց՝ Քոյոց երկնառաք.
կարկառեա՛ զաջ Քո՝ հեղ յանձինս մեր՝ զօրհնութեան վտակ,
զայս Նոր Տարեգլուխ՝ կնքեա՛ աղօթիւքդ՝ բանիւքդ անքատակ.

Զայս երախայրի՝ աղքատ իմ մտաց՝ չնչին, նորախայծ,
ընկա՛լ Բարերար՝ հայրօրէն սիրով՝ Տէր մեր ողորմած.
օրհնեա՛ զօրանալ՝ գիտութեամբ, ուսմամբ՝ շահեկան բարեաց,
լինել միշտ ծառայ՝ մինչև ցել շնչոյս՝ Հօրդ հասարակաց.

1 Յունվարի. 1828: Տփխիս.

Ծառայաբերաւ յԱշակերտաց Ճեմարանի Դպրատան Առաջնորդարանի Հայոց ՚ի Ստեփաննոսէ Նաայեան Նազարեանց.

# ՏԱՐԵՉԱՓՈՒԹԻՒՆ

Ա.րշալոյս աւուրս սուրբ ջուրք սրսկեալ լուսապերճ զարմին,
լանջակցեալ նմա հանէ խնդագին յիւր ծիր երկնային.
մաղթեն երերաց պարգեւել նոր լոյս մարդկան երկրածին,
նոր օր, նոր տարի, նոր վաստակ, զանուն, նոր գործ պանծագին.

Կռոնոս հինաւուրց յոքունց տեսլէ անյագ ծերունի
յարաշխատ սատար բազմամտեան արմին ճիշտ ժամանակի,
ուխտէ պահպանել անեղծ, անտխեղծ զգործ առաքինի,
միշտ գերեզմանել զիւր անգութ, հատու մանգաղ երկսայրի.

Յայս հանդէս շքեղ դիմէ սիգաճեմ Յանոս երկդիմի,
խոստմամբ հայել առաջ անկաշառ յանցեալ, յապառնի.
ընտրել զգուշաւոր զցորեան 'ի յարդէ կամ լաւ կամ յոռի,
կոչել զերկրածնաց զարարս ամենայն զհին և զարդի.

Հեռի 'ի սոցունց յաջկոյս եթերի Աթենաս բերկրի,
ծիածան պայծառ լոյս մեծ զնովաւ լուրջ փայլատակի.
գրչաւ գեղահրաշ անջինջ գծագրէ յանարուեստ միմ,
զանուն, վերախտես մեծ Աւստեր ուրուք ծեր Հայաստանի.

Ո՜հ. ո՛ր հողածին ժպիրհ, պարզ առաջ հայել մարթիցէ,
յայն վէմ խորհրդեան, յայն գրուած չքնաղ, յայն անուն յարգէ,
իմաստ, հմտութիւն, քաջ վերծանութի դպրաց կաճառի,
յայն նորատարազ գրուած ակնարկեալ պապանձեալ կարկի.

Հայք վերծանողաց այն ինչ սրտաբեկ խուսափեն անտի,
փողէ յեթերէ դիւրիմաց ձայնիւ երկթև ինչ Ոդի.
տայ տառից զանուն, արուեստէ զանուն մեզ յայտ փարելի,
դու Նոր Սէրն հեգէ, Ներսէս բարբառի մեկին և յայտնի.

Զայնակցեալ նմին որդիք սիրածինք գթոյթ արդանոխ,
սիրալից սրտիւք մատեաք առ իսկ տիպդ Սիրոյն անմահի.
ձայն երկթև Ոգւոյն ուժգին արձագանգս տայ 'ի մեր հոգի,
խրախուսէ օրհնել, գոհանալ, գովել զքեզ մեր Հայր բարի.

Ա.մ.պ.ք

Ամպք շնորհաց Հոգւոյն ցօղեսցեն ՚ի քեզ ցօղ համայն բարեաց՝
քեզ սատար լիցին կազդուրել շինել զանեղծ յարկ փառաց.
զանսուտ գրաւական անանց հրճուանաց երկնից խորանաց
աստէն յայտնեսցեն ՚ի Տէր Պետ Հովուաց ՚ի յորդոր բարեաց.

1. Յունվարի. 1827.
Տփխիս.
՚ի Ներսիսեան Դպրոցի.

Աղօթող ողջախէրտ Մեծերուրդ Դա-
տարան Գուրգէնը Յովսէփեան Մն-
չէեանց.

# ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ

Յայսմիկ նորաշրաշ չքնաղ հանդիսի հոգւոյս տեսանէ
’ի ստորեւ նայելն Տեսիլ սխրալի Գիւղաղն անձկալի·
անձնեայ, Թիկնաւէտ, քաղցրադէմ, խայտակն, քաջալանջ, արք
սաղաւարտ ’ի գլուխ արծուէնիշ, ընտիր, լուսապանծ փայլէ·
Ուսադիկ հրձուէր, անպայման բերկրի·
յայլ ստուերս հայի, յորոց շուրջ պատի·

Յաջ բազուկ նորա աղեղն երեւի լայնալիճ լարեալ,
’ի ստուար կապարճի մահահոտ փքինք լիով կան լցեալ·
խեթիւ ակնարկէ առ մեր ատելիս դիմօք զայրացեալ·
յայս հասմունս հայի հայրօրէն սիրով սրտիւ մորմոքեալ·
Թագազարդ, անԹագ. ստուերք լուսածագ,
գան, գնան անյագ, յայտնեն զմեծ փափագ·

Հայկ է, բազմակնիք· մեր անզգոյշ Պետ, Հայր, Ընծայ դիւցահար·
Հայկայն է ստուերս, նորին կերպարան, պատկեր անվթար·
Եւ, ուստի եմուտ նա յայս տեսարան, յայս յարկ պերճափառ·
և զի՞ քաջալերէ անկիւն յանկենէ լերախ, յուսապատար·
Ուե՞լ հրամայէ յայտնել խափանէ,
զիւր մուտն աստ գաղէ, խայտայ, պարասուէ·

Ի Թիկանց Սեհխ նազաքայլ ձեմեն Արամ մեծանուն,
Զարմայր սաստ քաջաց, Պարոյր Թագադիր, Արայն քաջ, սիրուն,
Արտաշէս աշխոյժ, Վաղարշակ խոհեմ, Խոսրով քաջազուն·
ցուցընԹաց սոցին այլ ձեռք Դիւցազանց ակնապէշ կառուն·
Վահագն անմահն, Վահէ, քաջն Վան,
անուանելին Տիգրան, յայսմիկ խմբի կան·

Նու զի՞ աստ խմբին ստուերք Մեհաղանց Տանս Արշակունեան·
’ի զննելն իշխն ’ի տես հանդիսի որդւոց զարգացման·
որդ ժպտին, խնդան, միմեանց ակնարկեն, բայց բառնան կական·
զի մեկնէ զնոսա ’ի մէնջ մեզ մոլար կռոց պաշտաման·
Ահ, մեկնին, թռուին, ծխօրէն ցնդին·
արեք երկնչին, լռուձային, փախչին:

Ահա

Ահա տեսանեմ երկնից ցոլանել ՚ի ծագ Հիւսիսոյ,
ոսկեզօծ փայլել ամպոց թխամած, նշուլել ծղոյ.
հանդէպ տարածոյ հօծ, խիտ թօթափին ցայտք ահեղ լուսոյ,
մերուստ ՚ի ներքոյքս լայն ուղէ յորդի անմահից դասու.
Գումարտակ զօրաբերթնոց, պարք հոգւոց Սրբոց,
՚ի բարձանց ամպոց դիմեն յայց Հայոց.

Թադդէ բազմարդիւն Տեառն այգւոյ մշակ, Տիրաձայնն Աբգար,
Գրիգոր լուսատիպ անձնանուէր Հովիւ սրբութեան սատար,
Սահակ Պահլաւիկ, Մեսրովբ բանիբուն և քերթողաց Հայր,
Նարեկայն Հրեշտակ, շնորհապերճ Ներսէսք և այլ Հարց կաճառ,
Աստէն ակմբին, քաղցրութեամբ հայեն,
ցնծան, սփոփին, զմեօք խանդաղատին.

Հեզաձայն կարդան զերկնից օրհնութիւն յայս յարկ կրթական.
միջնորդեն առ Տէր լինել Հիմնադրիդ յաւէտ օգնական.
զՆերսէսդ կուրեանց պահել յարկածից ազատ, անսասան,
Թէ սփոփել կրկէն զտխուր, զընկճեալ զեւրեանցն Հայաստան.
Աներկմիտ անսայ երկնից սուրբ Արքայ
ձայնի արդարոց այժմ և յարակայ.

Դու՝ որ զՄօր լուսոյ սուրբ Եկեղեցւոյ զորդիս առտ դգուես,
կաթողէն տածես քաղցր արգահատես յանձանձես, վարժես.
Դու՝ որ զՀաւատոյ լոյս ՚ի մեր հոգիս ջինջ ճառագայթես,
զանկշիռ զվարձ քոյդ Հանդիսադրի աստէն դրաւես.
Քրիստոս յոյս կենաց՝ յաթոռոյդ փառաց,
լո՛ւր մեր մաղթանաց, յայս մեր Հայր հայեա՛ց.

4. Փետրվարի. 1827.
Տփխիս
՚ի Ներսիսեան Ճեմարանի.

Աղօթս աշակերտ վերծերողի Դատարան Գրիգոր Յովսէփեան Մ՝նճիքեանց.

# ԽՐԹՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ.

1.

Զանդամն առաջին՝ երեխայք սիրեն.
Զերկրորդըն ոչխարք՝ անձկանօք ուտեն.
Զամբողջն ամբարիշտք՝ հողւով չափ առեն,
վէճ, կագ, կռիւ, աղմուկք՝ սրմին ներհակեն.

2.

Վանկն առաջինն՝ է նշանակ՝ Երրորդութեան,
աթուլթայից՝ եղեալ սկիզբն՝ ազգաց համայն։
Զի՛ք նրբամիտ՝ և մտերիմ՝ բեռին յանբան,
որպէս պանծայ՝ սուղապէս՝ Նէոն այս անուան.
Իսկ զամբողջին՝ 'ի սաղարթից՝ ծառք մերկանան,
մինչ ցդարունն՝ մերկ և անզարդ՝ աղքատ մնան.

3.

Իմ առաջին՝ բառն է օթոց՝ Դանիէլի,
յոր բազմեցաւ՝ 'ի մէջ կերչաց՝ Բաբիլոնի.
կամ լաւ ասել՝ է առաջին՝ բանտ Յովսեփայ,
յորմէ զնողաց՝ վաճառեցաւ՝ նա Պետափրեայ։
Զերկրորդ մասն իմ՝ 'ի յամլութեանըն Ռաքէլայ,
ծնաւ Բալլա՝ նաժիշտ նորա՝ որդի նմա։
Իսկ զիմ Ամբողջ՝ հովիւք բռնեալ՝ 'ի գործ դընեն,
երբ զխաշինս՝ 'ի մի կուսէ՝ յայլ կոյս վարեն.

4.

Մասն իմ անուան՝ է դերձակաց՝ գործ աւրելը.
համարեմ թէ՝ աւուր պարէնն՝ այնու լինի։
Երկրորդ մասն իմ՝ առն իւր է կէս՝ յորմէ ծնաւ,
առիթ մահու՝ և յարութեան՝ երևեցաւ։
Իմ Ամբողջին՝ պէտք յիմաստնոց՝ չափեալ լինին,
և բոլորչեք՝ սահմանաւոր՝ ուղիղ բերին.

Զայնեղ

5.

1 Զայնեղ դպիրք՝ քաղցու ձայնիւ՝ զիս նուագեն.
2 Մեծ խնդութիւն՝ խնդան չար հէնք՝ թէ զիս գտցեն.
Յայլակերպիլ Տեառն 'ի Թաբոր՝ Պետրոս կամէր
կանգնել զիս անդ՝ բայց ոչ գիտէր՝ թէ զի՞նչ խօսէր.

6.

1 Ես ոչ սիրեմ՝ ոչ ըղձափուր՝ ոչ ըղձերի.
2 Հայր իմ խորհուրդ՝ մայր իմ լեզու՝ բանականի.
3 Հակընթերցեալ՝ ես գերանուն՝ եմ ցուցական.
Անփուտ, ազնիւ՝ փայտից եմ հանք՝ Հարաւական.

7.

1 Ծանր զաւրէթ՝ ծովուց ջրոց՝ ոչ ըմպեցման.
2 Եմ 'ի շրթունս՝ բազմազղիտի՝ 'ի հառաչման.
Եր դու ուշիմ՝ զգօն, 'ի բանս՝ զչափ պահեալ,
ապա թէ ո՞չ՝ ամբողջացիս՝ ախմար կոչեալ.

8.

Մասն առաջին՝ հարիւրերորդ՝ մասն է դարի.
Միւսն այդ թռչնոյ՝ շնորհեալ 'ի կեր՝ Իսրայելի.
Զվերջին տեսցես՝ երբ 'ի մարմնոյ՝ ելցէ հոգի.
Ամբողջն ածական՝ է Յովհաննու՝ Կարապետի.

9.

Մասն առաջին՝ հարիւր ամաց՝ է գումարտակ.
Միւսն թռչնոց՝ սիրոյ, ծննդեան՝ բուն նշանակ.
Վերջինն է միշտ՝ պարտիզպանաց՝ գործ և վաստակ.
Բայց է ամբողջն՝ իւրոց մասանց՝ լոյծ անքատակ.

10.

1 Համբերք չունին՝ զիս 'ի գործիս՝ խօսարանաց.
2 Ջնջիչ հեղեղն՝ ոչ ինձ և ո՛չ իմ բնակչաց.

Որպէս

որպէս այլոց՝ առնել վրէժս՝ ինչ ոչ կարաց.
Պահեմ զայն տուն՝ ուր են ժողովք՝ չարագործաց.

11.

Ասղունք, Մկրատք՝ Թելք և կաւիճք՝ և այլք նման,
Նա, առանձին՝ որք ծառայեն ինձ անխափան.
2 Սակաւաւոր՝ եմ բնակչօք՝ գիւղ չինական.
Տուրևառեց՝ ամկումք չունող՝ 'ի հեռաստան.

12.

1 Ի ռամկայական՝ էական բայի.
2 Ի ծակից առնել՝ բանական արուէ.
Եւ համատարած՝ լայնածիր կամար,
Ամբողջն իմս՝ հնազանդ կամարար.

13.

1 Այքան չգոյիմ՝ ես 'ի յերեսս՝ որքան յոգիս,
յաճախակի՝ տպաւորիմ՝ 'ի քնքուշ տիս.
Թակարդ ուտից՝ պատրանք աչաց՝ հայելեաց յիս,
որպէս կոյր ոք՝ խարդաւանեալ՝ 'ի գուղունիս.

2 Սիմէոնին՝ տարապայման՝ յերկարեցայ,
զոյգ ընդ նմին՝ Մեսիային՝ արժանացայ.
Նւէկեայ՝ և Պապարու՝ իբրև ընծայ
դարձեալ կրկին՝ եւկոց հինգ՝ պարգևեցայ.

Եւ Նահապետ՝ Հայոց մեծաց՝ և Թոռն Հայկայ,
ծով մի փոքրիկ՝ և կիցք նորին՝ իմ առարկայ.
Նա և զաղէ ինչ՝ համեղ ձրկան՝ նոյն ծովակին,
կոչիլ յատուկ՝ իմով անուամբ՝ 'ի Ճաշ վարկայ.

14.

1 Երաշտութենէ՝ ես միշտ պատճառիմ.
2 Ոստուճած վարկանի՝ մի օր զհազարն իմ.
3 Մերձ ընդ տանձանաց՝ անանձատ շրջիմ.

Եւ

Ես նախնւոյն աւթիւ՝ մտից 'ի շիրիմ.

15.

1 Զուր 'ի մէջ իմ՝ հուր ընդ ինե՝ կրակով եռամ,
Դոժգոհ մինչ ցարդ՝ զորդւոց Հեղեայ՝ ուժգին գոռամ.
2 Յամաց յոգունց՝ բովանդակեալ՝ ես յղանամ,
Երևելի՝ գործով և նթ՝ անդորրանամ.
3 Աղջացուցիչք՝ իմ բոլորին՝ են խուռներամ,
Քառ եղանակք՝ ամիսք, շաբաթք՝ աւուրք և ժամ.
4 Թէ յարեացի՝ յառաջոյ իմ՝ Նոա տառ անդամ,
Հպարտ Բէլայ՝ ձեռամբ Հայկայ՝ զահեղ մահ տամ.
Իսոր վերայ եմ՝ 'ի սիրտ երկրի՝ յոգնատարեամ,
Վէհ Լայնատորը՝ դահ բանսարկուէին՝ չարեօք փակթամ.

16.

Նախկինս խափան՝ է անեսութեան՝ մարդկան աչաց,
Օկէան իմ Օծեալք՝ կարեն կրել 'ի գլուխ իւրեանց.
Իմ Բովանդակն՝ մեծ Լուսատուէին՝ տիեզերաց
ապաստաւորէ՝ ընդ իւր չորից՝ արքանեկաց.

17.

1 Տեսակ խաղու՝ որով մարդիկ՝ շուրջ բոլորին,
Երգեն, ոստնուն՝ խնդան, ծափեն և ծիծաղին.
2 Այս է երկտառ՝ ինչ դերանուն՝ ամէն յայտնի,
ինքն երրորդ դէմ՝ բայց առաջնոյն՝ ես ընտանի.
3 Անշունչ, անշարժ՝ է այս յոգնեալ՝ չորքոտանի,
յորոց միոյն՝ ծարէ զօղի՝ և կամ գինի.
Ամբողջն առնէ՝ զգործ հրացանի՝ այլ չէ հրացան,
սովաւ Դաւիթ՝ շուն այլազգւոյն՝ մատոյց վախճան.

18.

1 Սահանգ բարելից՝ ուստի և ռետին,
ուրանօր հանգչի՝ Ամօրդւոյն մարմին.
2 Սնունդ լապտերաց՝ կըթեալ 'ի կաթանց.
պատկեր արդարոց՝ առաքինութեանց.

Օշրա

Զօրավար Հայոց՝ անվան արքայեան,
աՀ, դող, սասան, սարսափ՝ զօրուն Պարթևեան.

19.

1 Վարդն եմ և կէն՝ ընտանեցեալ՝ սեւէն անբան.
2 Որայ վարդատուղէ՝ բայց խոնարհեալ՝ չորեքշբեան.
Ծըլումնից՝ վերակացու՝ տեառն խմոյ տան
կառավարիչ՝ և կամ տնտես՝ ես եմ միայն.

20.

1 Սոխ լինիմ կանաչ՝ տապա ապխտակ,
Մութ Սասնոյ յորդիս՝ կարկ վերակ.
2 Նա յԵբրայեցւոց՝ ամսոց եմ միակ.
Նմանոյշ է արեաց՝ բարեկամ ջերմեռակ.

Ի ՏՓԽԻՍ. 1827. Յօրինեաց Աշխատասէր Պօղոս Աշճարեանց՝ Դպրատան Ներսէս. և Տպարան. Ի Նէ-օրեան Պողոսեան.

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

# ԽՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ.

1 Երեկ մանուկ այսօր սովեստ վաղիւ դնի 'ի տապան,
միշտ հոլովեալ անուանման չունի յերկրի իւր կայան.
բախտ և աշխարհ են խաբեբայք միով առնուն միւսով տան,
երջանիկ է՝ որ ոչ խաբի, այլ կայ անխաբ յիւրում տան.

Երթայք, երթայք 'ի զնին շիրմաց և առէք ձեզ օրինակ,
վասն էր լռեն, ոչ բարբառին որպէս յերեկն և յեռանդ.
էին նոքա արքայաւորք կամ դեղաղէնք բովանդակ,
այժմ, յայժմ քաջ՝ բայց սուր մահուն մաշեաց 'ի սպառ նոցա զանդ.

2 Մի՛ ցանկանար փառաւորել, քանզի փառքն է անցաւոր,
այսօր քեզ հիւր վաղիւ միւսում թռչի իբրև թեւաւոր.
լաւ, աշխարհս և չէ հնար զայն միրատին քեզ բերել,
միայնակ ճար, միակ օծման աղետից է համբերել.

Դի՛ր առաջի կտոր մի կաւ՝ հայեաց 'ի նա թէ զի՞նչ է,
կաւ ես և դու անարգ, ուստի զոր ինչ գործես ոչինչ է.
յորոյ վերայ ոտք քո քայլեն անտի և դու ստեղծար,
վասն այսորիկ մի՛ հպարտանար հողադանդուած անհանճար.

3 Միտքդ է չար, խելօք կշռեա, զոր ինչ կամիս դու խօսել,
չափեալ մտօք, կշռեալ խելօք առ 'ի զոք ոչ վիրաւորել.
լեզու փոքրիկ մասն ինչ մարմոյ վշտաց գործի անարգել,
թէ ոչ սանձես զբաղղումն քեզէն սաստ նմա դու անարգել.

4 Ի մտանել քո յանկողին համարեա զայն գերեզման.
'ի դալ, պատել զքեզ քնոյ՝ ծանիր և զայն տիպ մահուան.
'ի տուրևառս ընչոյդ վարկեաց տալ զհոգիդ առ կեանս.
այսօրեան կեանք շատ են քեզ շատ՝ մի՛ ասեր թէ կեամ վաղիւ.

Այսօր 'ի ձի յեդուց 'ի դի միւսօրն զի՞նչ թէ ոչ 'ի հող.
այսօր 'ի վէր, վաղիւ 'ի վայր յայլօրն զի՞նչ թէ ոչ 'ի հող.
այսօր 'ի յօդ՝ յայգ՝ մահու բոց միւսօրն զի՞նչ թէ ոչ 'ի հող.
այսօր երկինք վաղիւ երկիր յայլօրն զի՞նչ եթէ ոչ հող.

Խո՛ր

Կա՛ր խոնկացեալ զվիճակէս զդոյդ և զցերեկ ո՛չ կարգեալ.
Քա՛նի վշտօք , տառապանօք յարբունս հասեալ զարգանեալ.
Իբրև գազան մտեալ յանտառ այս կենցաղոյս որջանեալ.
Քաջ յորսորդէն 'ի մահուանէ զերծ գտանիլ ցանգ ջանեալ։

5 Որքան քաղցր է բաժակ բախտին նոյնքան կարծեմ թէ դառն է.
վայելողաց մերձին բարբառ լսեմ զայս ինչ թէ դառն է.
աղքատացեալք յերկրի փառաց ասեն հեծեն թէ դառն է.
վկայ ; լաց յաչսն , ձեռն 'ի ծնօտին աղաղակէ թէ դառն է։

Յառաջ մտաց ջուրքն կենաց ձայն արձակէ ես քաղցր եմ,
որ վշտամեալ լեղեօք մեղաց այդ տակաւին ես քաղցր եմ.
Ճաշակեցէք , հաւատացէք , տեսէք աչօք զի քաղցր եմ,
որովհետև թեթև բեռամբ լծով սիրոյս ես քաղցր եմ։

6 Ո՛ւր ջանաս մնձրև կանգնել զապառաժ կարծրութեան վիմաց.
Ընդ կուշտ վերայ տես , զերդ խախտեալ լուծանի 'ի բաց.
յաւազ սերմանես և զո՛ւ խրատու ըմբոստ յամառաց,
կրկնակի հնձես թէ սերմանեսցես 'ի սիրտ խոնարհաց։

7 Մէ՛ հաւատամ ես երազոյ զի տեսի՛ն ասէ թէ սուտ է.
ձախորդութիւն իսկ վկայէ յաջողութեան թէ սուտ է.
բախտն ետ ինձ գանձ բայց գերեզմանն ճշմարտէ թէ սուտ է.
երկարութիւն կենաց իմոց մահու՛ամբ զգամ թէ սուտ է։

Արամազդին զմայլեալ տաճար յառս ականարկեալ մոռանայ.
պճնազգեցիկն դէմս դիպեալ զզարդս իւր բնաւ մոռանայ.
աշտանակօքն յաշխոյժ նժոյգ զդագաղ տեսեալ մոռանայ.
տեսեալ ոգէտ զխոռուն մեռեալ զդասս իւր ամէն մոռանայ։

Պսպղուն ինչ տեսեալ հեռուստ կարծեցի թէ իբր ինչ է,
մօտ գնացեալ շօշափեցի աչն իմ ասաց , ոչինչ է.
զվայելչութեանց սին կենցաղոյս ճառատէին թէ ինչ է,
բայց մինչ խաբեալ ըստանձնեցայ հոգևս գոչեաց , ոչինչ է։

8 Խունկն ոչ բուրէ 'ի բուրվառի թէ ոչ ճնշի վառ հրով.
մանուկ տխմար չզգօնանայ թէ չանարգի սեաւ մրով.
Գետոք թէ չթափին վաղ ցամաքի Ովկիանոս վայրագ ծով.
այլ չէ առոյգ առաքինի թէ ոչ հեծէ ընդ լծով։

Ձէ

9 Ո՞ խուճապես միրեւեթեալ կամ զի՞ գոռաս ինքնապարծ,
ոչ երկնչիս թէ յարիցեն Պիղծինեաք կարծեաց.
կապիկ ես դու և կամ թութակ որոց ուսեալ զբառս ինչ,
միշտ պապաջեն 'ի խաժամուժս որպէս թէ են խօսուն ինչ.

Մի՞թէ մեղու իշխէ կոչել ամենայն ճանճ որ բզզայ,
կամ զիեցիկ լացող տղայ համարեսցի՞ քաջ Մուզայ.
աստ անձինդ հէ՛ր ես դու աստ հայրենիք իմ քերթես ե՞ն,
հա՛ւր են դըքս յորս յարեցար չէ՞ զի մի՛ այրեսցեն.

10 Ա՜խ, ուստի՞ է զի 'ի դարուս չդիտէ ոք զպարգ անձին.
ա՜խ, զի՞ երեթայ խառն 'ի յուսիս ծննդականն լու հոգին.
ա՜խ, է՞ր խախտէ զամրոց բարուցն ում իշխէ իւր թշնամին.
ա՜խ, ո՞րպէս ես ճշմարտեցի պարկեշտութիւն չէք յումեք.

Վա՜յ, գտան է խոզից յարօտ դիմէ հաւ զաղաւուց հետ թաչի.
վա՜յ, կարմիր վարդն զհրոտ դժնիկն համարի իւր ընտանի.
վա՜յ, բարին անչար երթեալ առ չարն զարհեստ նորին ուսանի.
վա՜յ, թո՛ւ իսկ ինձ թէ փարելին պարկեշտութիւն չէք յումեք.

Թէ մատչեցին ինձ ակտեղք թագ, և անուն բարութեան,
զանուն միայն առընկալայց քան զոր չէք ինչ պատուական.
ինձ զի՞նչ պարծանք բիւրուց լինել և ոչ անձինս իշխան,
երբ 'ի մէջ իմ թագաւորեն գումարք կրից զանազան.

11 Աստուածութեան է նշանակ վրէժխնդրել յումեքէ,
զկանացի ունի զանուն զի զարութիւնն անարգէ.
աներկեւչարն խոհեմ մարթ զի որ զքեզն ամաչէ.
վրէպ կարկին քննայոււղէն միշտ թիւրումն զիւր չափէ.

12 Որ միանգամ բանայ զխորհուրդ իւր ոտխտին այնպէս է,
որպէս թէ ոք զոսկի մանեակ յուղն էշոյ արկանէ.
որ անխտիր ընկերշակէ ընդ ցոփակեացս այնպէ՛ս է,
իբրու թէ ոք զկոզ տղմոտ 'ի ճաշ եղբարց կոչեսցէ.

13 Քաղէտ անկարկ ծիծաղ հայեացք հեղահոգւոյն է նշան,
զի աչքն և այտք յօնքն և երեսք փայլին զուարթ քան շուշան.
Գտան մի մեռեալ լաւ համարի քան կենդանի բիւր գազան.
ոչինչ է դեղ յամառ մտաց միայն եթէ գաւազան.

Թագ

14 Թագ պանծալի կապես 'ի գլուխդ, թէ յաղթեսցես քոյ կրից․
քան զախոյեան հանդիսանաս, թէ լուիցես իմ բանից․
զի թէ ընդ կամաց կրիցդ շարժիս հաւասարիս անբանից,
որք անխոհեմ և անխորհուրդ գործեն զիտմամբ հաճոյից․

Դուռն է բերանդ թէ ոչ է փակ որք 'ի սրտիդ, տեսանեն․
խօսողն ընդ քեզ է գող որսորդ զգուշացիր 'ի լեզուէն․
եղբայրացիր խոհեմութեան որ է պարծանք մարդկային․
ա՛ղէ խորշեա՛ց 'ի խենեշից և 'ի վարուց պագշոտէն։

15 Եկեղեցին է մեր ծնող յոր ցկատար պարտիմք կալ․
որ ոչ երթայ կամ թէ երթայ և չգիտ կամի հեռանալ․
նմանի նա ձագու իժի որ ծննդեան չապաւեալ,
գայ ելանէ ինքն ընդ ինքեան զմօր արգանդն ծակեալ։

16 Քեզ վայել է ընկերակից մաքուր հոգւով ընդ իս բերիլ,
ինձ արժան է միօրինակ վերապատուեալ ընդ քեզ վարիլ․
քեզ վայել է վասն իմ երբեք պատրուակեալ չար չխօսիլ,
ինձ արժան է յերբեմնական յայտն կատակեդ չխակալել։

Սէրն է սալինձ ջանա՛ զի մի՛ աւերութեան ջուրք լուծցի․
Ճրագ է վառ լե՛ր դու զգոյշ զի մի՛ շնչով քով շիջցի․
վտա՛կ է յորդ մաքուր, վճիտ թէ ո՛չ խնամես պղտորի․
ջե՛րմ դրօշմ է Աստուածային պահեա՛ ամբողջ 'ի սրտի։

17 Տեսեալ զմոլս ափշիմ 'ի վերայ նորա կուրութեան,
քանզի զայս աշխարհ համարի բնիկ իւր յարկ սեփական․
աւա՛ղ, շողոմի չիլ է զաչացու, ծուռ, ձախ, թեք հայի
'ի բարձունս երկնից յորժամ արդ անկաւ 'ի վայր գերութեան․

Ո՛ լինէր մոլի կոյր իմանալէ յայն ապաժամն,
թէ հոգիս տնկա՛ծ է զոր ես ունեմ չէ և բաւական,
զի ծածուկ գոչէ յայտնի հառաչէ ա՛խ, վա՛յ կարդալով,
թէ եմ երկնացի և ոչ երկրացի ընդ կարծեաց մարդկան․

18 Որքան կարես բարերարեա՛ ամենեցուն չէ՛ 'ի կորուստ,
առ հաւասար և՛ սիրելեաց և՛ ատելեաց չէ՛ 'ի կորուստ․
թէ և իցեն այնք ապերախտք այլ գործք բարիք չեն 'ի կորուստ․
զի որ զհատ զթիւ հերաց զմարդ լցի նմա կորուստ։

Օրինչ

Զինչ աւանդես ժամանակին հատուցանէ քեզ լիովին·
որով չափով վարես ընդ քեզ վարձատրես չափով նովին·
զոր ինչ ետուր և զայն առնուս զի անխախտ է կշիռ նորին·
կեանք անուղեղ, վարք զարտուղի ժամէ ՚ի ժամ մերձ կործանին·

19 Կղկալթ սրտիւ ձկտես, տարփաս վերելանել ՚ի բարձունս,
զի անպարգել ականեսցես զատորակայ զկողմունս·
յարկ գիտութեան տաճար է բարձր ամպահամբոյր երկնահաս,
աստիճանել ՚ի ծայր նորա խայտալ ՚ի սպառ էր հեղգաս·

Բազում ինչ է, որոց յոյժ յոյժ փափագեցայ ստանալ·
կորեաւ իղձ իմ ՚ի չէք դարձաւ երբ տեսի զայնս յիս եկեալ·
Ն. յլ. որք ՚ի բնէ դեգերեցան իմաստութեան հասանել,
օրըստօրէ բորբոքեցաւ աշխոյժ եռանդն զհետ մտել·

20 Գիր ՚ի մտի՝ թէ միանգամ կամ աստ, կամ անդ յայտնեսցին
գաղտնիք և գործք ստուերապէս զկնի իմ ընթասցին·
մի՛ գործեր չար՝ զի սատանայ է անուանեալ հայր չարին·
որդեգրէ ՚ի տարտարոսս ՚ի թիւս որդւոց խաւարին·

Ներկեր, երկեր յանդիմանեալ քեզ զայն ահեղ տեսարան,
տուր զհաշիւ պարտեաց հոգւոյդ չամաչել յայն դատարան·
մարմին, աշխարհ, դև, ցանկութիւն աքնին հոկեն ՚ի դարան
կալթել ընդ քեզ և թակարթել ՚ի ցանց անել յաւիտեան·

21 Իշխանացար ամենեցուն հայեաց և տես վերջդ մա՛հ է·
զի՞ համակ գրաւեցեր քեզ ողորմեաց վերջդ մա՛հ է·
Ակնկանոս քեզ գանձ դարձու եղո՛ւկ կենացդ վերջդ մա՛հ է·
ուստի և դու զհոգիդ հոգա՛ զի ամենից վերջն մա՛հ է·

Աստացիր քեզ զՏր Այ քան զոր բնաւ չէք պատուական,
զի յերկրային փայլեցուն ՚ի սպառ չէք ինչ եր պատուական·
մի՛ւս դուստ և ել ունայն զի չէք ՚ի նմա եր պատուական,
Այ է հանք համայն բարեաց Ած ամենայն է պատուական·

22 Խիղճն է խոհեմ, ծեր դատաւոր ամենայնի քաջ գիտակ,
ուղիղ վճռէ զվէճն քո թէ ես նմա հպատակ·
բաց ՚ի նմանէ չունիմք յերկրի բարեաց գործոց յիշատակ·
աջակից է նմա հոգին և ներհակաց շահատակ·

Ա. յե

3 Այն մեր ողջ կեանք ջուրք անձրեւաց պէս տեղայ, ցամաքի.
այս է մինչ, հողմամաշ հասի՝ շուտ շուտ որոշի.
Ո՛հ, որ կուրօրէն այս մախստէի հետամուտ լինի,
այս պարանի պատրեալ վարանի անյոյս կորնչի.

Ի՞նչ կատաղի, տխպ կոծողի, յիմար ես կամ դիւահար,
զի չայգեն ինչ քեզ ներկայից կամ անցելոցն տխպար.
վայրկենական ներկն է կեանք մեր կարճ, սուղ, նուազ, ոչ երկար,
եթէ կամիս հայց դու ցքեզ թէ ցայս մայր զինչ շահեցար.

4 Մնոյն էրք ոչ սկզբանէ այլ վախճանաւ պսակին.
ճանիճ անթիւ քաղաքք լինին, ներգործութեամբ և ոչ բանիւ.
կերպարանօք շատ բարեկամք սակայն սրտեամբք բնաւ ինչ
անկեղաստնք բացուն լինին այլ ձեռնտուք չերեւին.

---

## ԲԱՆՔ

## ԱՂՕԹԱԿԱՆՔ.

1 Ի մօր կակուղ մտաց իմոց դրոշմեալ զինւքդ Հայրական.
'ի վառարան իմ ջերմ արեան արծարծ զհուրն Սեւեռեան.
'ի թարմութիւն իմ մանկութեան ջեռո զսէրդ Աստուածութեան.
'ի տուն խաւար զգայութեանցս ծագեա զլոյս Շնորհական.

2 Դիւրին է քեզ Տէր զերկրի մի փոխել 'ի կարգից մեղաց.
դժուար է մեզ Տէր հեշտեաւ հասանել կորուսեալ փառաց.
դիւրին է քեզ Տէր բանալ, համբառնալ զհաճոյս քոց կամաց.
դժուար է մեզ Տէր թեւօք մարմնական մեկնել 'ի չարեաց.

Ա՛նչ կամք ամպարիշտք զիս հրապուրեցեն մի թողուր Տէր իմ,
'ի սուրբ քոց բարձանց իջանել յերկիր մի թողուր Տէր իմ.
գերեալ գիշերել 'ի ծոց հեշտութեանց մի թողուր Տէր իմ,
կապտել, մերկանալ յանձնառ քոց շնորհաց մի թողուր Տէր իմ.

Տերեւ եմ Տէր ծառոյդ կենաց քեզ զինչ օգուտ թէ չորացայց.
կիսաթերթ բոյս եմ Տէր այգւոյդ զինչ քեզ շահ թէ թարշամեցայց.
մատաղատունկ անբեր եմ Տէր մի յօժարիր թէ անիծայց.
Նոր անձնեալ՝ պտղաբերել, օժանդակեա զի վայր չանկայց.

Աշխոք

5 Մեղաք իմ դառնինք կոչեն զքեզ մխիթարել ո՞ւր ես Հայր·
Դարման և դեղ անձառ վիրաց դու շնորհես ո՞ւր ես Հայր·
Զմէ՞ ցամնուս սրտին արծիւ՞ աղաւնեկիս ո՞ւր ես Հայր·
Ուր և դիմեմ ըզքեզ միայն ունիմ դադար ո՞ւր ես Հայր·

Դու որ զկարգ ընդմեզաքայլ անօրէնես յաւիտենայն,
զքաղցեալ առ հաց, զծարաւ առ ջուր ինքնաբերունք բնութեան·
յինէ՞ն խռովիս յե՞ս ոչ հայիս որոյ սկիզբն և վախճան
Զ՚Քէն և եթ կախեալ ունի իմ իշխան խնդութեան։

6 Ես որ չէի և արդ ՚Քև եմ քաց ՚ի ՚Քէն Տէր ո՞վ լեցէ·
իմ արարիչ, իշխան կենաց, յոյս, խրախոյս ո՞վ լեցէ·
քաղցր ակնարկու, անաչառ հայր ամենողորմ ո՞վ լեցէ·
վարձ և պսակ կամարարաց քաց ՚ի Մնայդ ո՞վ լեցէ·

Ապա եթէ անօրէնիմ մի՛ յիս նայեալ պատժեսցես,
այլ քո յանձառ ողորմութիւնդ իմ՛ զամենայն յարմարես·
Թէ յանդգնիմ ձգել զձեռս ՚ի ծառ մեղաց արգելցես,
Հոգւի բարի երկիւղ քո սուրբ յոսկերս իմ Դու հեղցես·

7 Աստուած է մեծ, մեծացուցիչ բարեպաշտից Աստուած է.
Աստուած է դէտ, և նախատես չև գործելեայն Աստուած է.
Աստուած է լոյս ամենավայր յերկինս յերկրի Աստուած է.
Աստուած է ինքն յաւիտենայնի եզր և վախճան Աստուած է.

8 Բարձու ցանկացեալ անկայ ՚ի ստոր Աթենարանի մարդկան,
եկ, հան ՚ի վերին գաւառ շնորհաց սրբոց օթարան.
տակաւին շաձեալ չորացայ փութով ո՞ Տէր զօրութեան,
հայեաց ՚ի տկարս կարկառեա սուրբ զաջդ կանգնել յաւիտեան։

Դոսացելոյս յոգւոյն մարմնոյ աճապարեա Բժիշկ ճարտար.
գիշեր յոգնիս առաւօտեա ջինջ արուսեակ կենդանարար.
ընկալ Տէր զիս, դու կեցո զիս, ո՞վ դեղ կենաց ինձ արա ճար,
դու արարիչ ես արարած արա ինձ այց միշտ բարերար։

9 Թողեայ ՚ի քաց անմոռակալ այցելութեան ժամն երբ է.
պաշարեցայ ՚ի Թշնամեաց ազատութե ժամն երբ է.
հիւանդացեալ եմ չարաչար, բժշկութեան ժամն երբ է.
տխուր եմ յոյժ մինչև ցմահ, ուրախութե ժամն երբ է.

Ժամ է

Ժամ է այժմ մեզ Բարեգութ հրճուել, պարծել սիրով Քոյին.
Ժամ է այժմ գոհաբերան փառս վերերգել անուան Մեծիդ.
Ժամ է այժմ մեզ հրաշագործ պարտավճարել բարեաց Քոյին.
Ժամ է այժմ համանգամայն ոչ մոռանալ զշնորհ Միածնիդ:

10 Ողորմածին ծագումն այգուն արեւափայլ ուստի՞ է.
անուշահոտ բուրումն ծաղկանց գունափթիթ ուստի՞ է.
խաղաղաչունչ սիգ ձայն հողմոց հովահարաց ուստի՞ է.
երանաւէտ եղանակն սրտից արքայութեան ուստի՞ է:

Թէ ոչ 'ի Քէն անմուտ Արփի՝ զոր անխնայ հեղանես.
Թէ ոչ 'ի Քէն քաջ Այգեպան՝ զոր հանապազ խնամես.
Թէ ոչ 'ի Քո 'ի բուն բարուց՝ յոր գլխովին բարի ես.
Թէ ոչ մատամբ Քո Թելադիր՝ որով զոլորտս պաշտպանես:

11 Ժամ եռու, ժամանեցի 'ի խորհրդի մաքրութեան:
Տէր Յիսուս կարկառ զաջ Քո զիս կազդուրել յայս անձկութ.
արդ ծանեայ ազդմամբ հոգւոյս զհզօր անուն Քո մեծութեան,
ճանաչեմ զիս աներկբայ արժանաւոր գոլ կորստեան:

Ո՛ր զուարձ, որ սուրբ ծագեն մինչ զիս տեսից առ Քեզ ուղղեալ.
առանց Քո չեմք ինչ որ չէ, եւ է որ է Օրհնաբանեալ.
դարձ առիս համբարձ զմիտս զՔէն եւեթ առ 'ի խոկալ,
Դու իշխես, եւ մեք իշխեմք իշխեամ եւ ինձ Ամենակալ:

12 Մեզ պէտք են Հայր ապահովել 'ի սոդտանաց ծանրութեանց.
մեզ պէտք են Հայր Թեթեւանալ 'ի մարմնական տքնութեանց.
պէտք են Բ'ժիշկ գալ 'ի խնդիր մեր կորուսեալ ողջութեանց.
պէտք են Փ'րկիչ զատ եւ ազատ կալ յերկրային ցանկութեանց:

Քեզ վայել է Ո՛նով զթոտ լսել որդւոց քոց ձայնից.
Քեզ անկ է Յիսուս վաղվաղ օգնել յուսացողաց 'ի վտանգից.
անկ է Հոգւոյ ցամնուլ, սաստել Թշնամեաց մեր բնաւից.
անկ է Մարեայ յանուն Քո մեծ հաշուել ընդ Քո ծառայից:

1827. 'ի Տփխիս:
'Ի Ներսիսեան Դպրոցի:

'Ի տպ. Աշխէնրաւոյ Հնեգելբերգ Դա-
տաւոր աշխատասիրեաց Դպրապետ Քերթ.
և Ալբրտա. Աստուծեան Դպիր Աշխար-
հաց:

# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ։

Պրուճկան։

Ո՞վ է աստ Յակովբ Սահակայ որդի,
հայր տերանց իմոց այր երանելի.
ծանօթ Աստուծոյ ինձ անծանօթի,
հինաւուրց, ընտիր, մաքուր Ծերունի։

Յակովբ։

Ես եմ այն Յակովբ՝ զոր այր դու խնդրես,
հայր գերդաստանիս՝ զոր աստ տեսանես.
յումմէ՞ յղեցար, զի՞նչ կամիս, ո՞վ ես,
ասա աներկիւղ, զի՞ է, զի՞ սարսիս։

Պրուճկան։

Ա՜խ ո՞վ ալեզարդ ծառայ Անեղին,
յեղծական մարմնի հրեշտակ անմարմին.
երջանիկ քոյ կեանք, վարուց ամբծութիւն,
զիմ լեզու կապեն, զիմ հագագ փակեն։

Քոյ որդիք առ քեզ զիս առաքեցին,
լինել գուժատու քում յարգոյ անձին.
քոյ Յովսէփ չքնաղ, հրեշտակ պատանին,
գազանաց մատնեալ է յանտառ մթին։

Անդամ ինչ մարմնոյն ոչ ուրեք տեսաւ,
և ոչ այլ նշան, գլխարկ կամ հալաւ.
այլ այդ պատմուճան արիւնաթաթաւ,
'ի հովուաց ոմանց գտեալ մեզ բերաւ։

Աղէ տես Տէր իմ այս է պատմուճան,
Յովսէփայ մաքուր քոյ անմեղ մանկան.
որում զանբաղդին վաղահաս վախճան,
և զիս արձակեան յիմ լքեալ անդեայն։

Այ

## Յոհուլէ.

Ո՜յ, այս ծաղկեայ, ընտիր պատմուճան,
է որդւոյ իմոյ՝ զոր եկեր գազան.
սայրասուր ժանեօք արկեալ 'ի կործան,
վագր, արջ, գայլ, առիւծ, կամ այլ չար գազան.

Ո՜վ Յովսէփ Յովսէփ ցուպ իմ ծերութեան,
շնորհալի, քաղցրիկ, ընքուշ, գեղաղան.
աչեղ, մրայօն, կարմրայտ, քաղցրաբան,
խարտեաշ, դու էրահեր, մանուկ անման.

Ո՞վ զիս ստիպեաց զքեզ առաքել,
անզգուշ, անընկեր, յուղի անընդել,
մարդախանձ գայլոց կերակուր առնել,
զորդին իմ զգօն զուր կորուսանել.

Ա՜յ ինձ սգալի, անբաղդ ծերունւոյս,
այրի, անսփոփ, տխուր անորդւոյս.
Առաքե՛լ և Յովսէփ իմ կեանք աչաց լոյս,
իջեալ 'ի շիրիմ՝ զիս Թողէր անյոյս.

### Հարցմունք և Պատասխանք Խորայնէի.

Բա՜ն է Նախահայր, լալ և աշխարել,
զանբաղդին անուն անդադար յիշել.
ողբովք զմեռեալն չէ՛ մարթ յետ կոչել
քա՛ն է անտրտունջ կալ և համբերել.

Յադամայ ցայսօր չէ՛ք ուրուք լուեալ,
զմեռելոյ ուրեք կրկին յարուցեալ.
ապա զի՞նչ օգուտ անսփոփ ողբալ,
նեղել, մորմոքել, արտասուել, սգալ.

Մետասան որդիք կան քո կենդանի,
առոյգք, համահասակք, գործունեայք, արի.
հարսունք և Թոռունք քո քեզ սիրելի,
կարեն զանբաղդին առնել զտեղի.

## Յաւելք.

Տառապանք և վիշտք զանձն իմ մաշեցին,
աչք իմ ցնծութիւն ոչ ուրեք տեսին.
յայնժամ իմ յօդուածք բերկրեալ խայտասցեն,
յորժամ զիս տեսից 'ի շունչ իմ վերջին.

Չէ՛ նա վատաբաղդ՝ որ վաղ մեռանի,
այլ որ կեայ մահու սիրելւոյն այրի.
արդ կեանք իմ մահ է, մահ՝ կեանք ցանկալի,
փափագիմ գնիլ յորովայն շիրմի.

Ո՜հ, որդեակ, որդեակ, զիս բարձ, առ քեզ տար,
մի՛ թողուր զիս աստ տանջիլ չարաչար.
ես քոյ մոլորակ, դու արփի պայծառ,
առանց քո զինև պատեալ է խաւար.

Մահաշո՛ւնչ, ժահո՛տ, կարծո՛ւնչ Ներունի,
Ճաղա՛տ, շիլ, կաղ, հիւծ խրտուճիլ անճոռնի.
մեռելոց Իշխան կմախք սոսկալի,
համայն կենդանեաց տեսիլ ատելի.

Ո՞չ երկեար յինէն, յիմ անբիծ վարուց,
յիմ պահապանաց՝ յանմարմնոց պարուց,
յանսպառ շնորհաց յիս յերկնից հեղլոց,
յիմ Ամենիշխան Տեառնէ աստուածոց.

Անգութ, ձգեցեր զքոյ սուր գերանդի,
հնձեցեր յերկրէ զիմ Ռաքէլ բարի.
զիս 'ի սուգ արկեր, յողբ անտանելի,
զիս միայն թողեր այրի տրտմալի.

Մինչև էր բուժեալ վէրք սրտի իմոյ,
նոր վիշտք, նոր արկածք, նոր աղէտք սգոյ,
նման կարկտածին թղպայորդ ամպոյ,
տեղացեր 'ի գլուխ թշուառս ծերոյ.

Օ՜ իմ Յովսէփ յաշխարհ մեռելոց տարար,
գազանաց ժանեօք հերձեր չարաչար.

զանձն իմ կիսամեռ, տրտում, ոգեսպառ,
'ի վտանգ վերջին հասուցեր 'ի սպառ.

Ո՛հ պատմու ճան նազելի որդւոյս,
Ռաքէլայս երկանց անդրանիկ պտղոյս,
յարեւն շաղախեալ անմեղ աղաւնւոյս,
խոնարհ, հնազանդ, խոհեմ սիրելւոյս.

Ո՛ իմ չքնաղ Ռաքէլ 'ի հող ծածկեցի,
զՅովսէփ գեղեցիկս այսօր կորուսի.
որդ կամ անսփոփ, անզաւակ, այրի,
նեղեալ, վարանեալ, անբաղդ ծերունի.

3 փետրվարի 1827. Աղայց Գրիգոր Յովսէփեան Մելիքեանց աշակերտ ի [illegible] Ներսիսեան Դպրոցի.

Տփխիս.

# ԱՂՕԹՔ

Որք ասին 'ի սկզբան և յաւարտ պատարագութեան Ընծայանելոյն Հայրա-պետութեան 'ի 4, 5 և 6 Դեկտեմբերի Ներսէսեան Դպրոցի.

---

Ո՛վ անեղ, աներբ, անկէտ, անսահման, անհաս 'ի մտաց,
'ի քրովբէաբարձ յաթոռոյդ փառաց յոյս մեր դաս հոյնեմց·
Քեզ Տէր սքանչելի՝ գանձուր անսպառ ծոցւոյդ քոյ շնորհաց,
Լոյս է հոգւոյ, 'ի կամաց, մտաց զաւ[illegible] միոաց·
Զքեզ ոչ ոք ետես, զՈրդին հոգեղինաց Որդին քո պատմեաց,
Զքեզ ցոյց ծայր լուսոյ ոչ մարմնոց մերոց, այլ հոգւոցս աչաց·
Նաև ամենայն են ջինջ հայելիք՝ ցուցակք քոց փառաց,
յոր տեսեալ զՈրէնդ՝ փառաւորեմք, հրճուիմք խնդութե՛ անանց·
Ուստ աղերսեմք, Անուն պաշտելի, շնորհատու բարեաց,
զՔեզ երկիրպագել, սիրով հնազանդել քոց քաղցր օրինաց·
Ընկալ հոգեակը, զօրհնութեան նուագս յանսուրբ մեր շրթանց,
այլև զմեր յանցանս հուրբ հզօր սիրոյդ աստուածոց Աստուած·
զՔեզ Հօր ընդ Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ քոյին Իմակցաց,
փառք անլռելի, գոհութիւն, պատիւ, պաշտօն գեղնամամբ.

Աշոտ Գ. Յ. Մելիքեանց.

ԱԿԱԴԵՄԻԱ